



**2012 թ. ՄԱՅԻՄԻ 6-Ի
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ**



USAID
FROM THE AMERICAN PEOPLE


COUNTERPART
INTERNATIONAL



Զեկույցը տպագրվել է «2012 թ. խորհրդարանական
ընտրությունների նկատմամբ քաղաքացիական
վերահսկողության կարողությունների զարգացում»
ծրագրի շրջանակներում



Open Society Foundations
- Armenia



DEN NORSKE HELSINGFORSKOMITÉ
THE NORWEGIAN HELSINKI
COMMITTEE

Դիտորդական առաքելությունը և սույն տպագրությունը իրականացվել է Քաունթերփարթ ինթերնեշնլ Հայաստանի, Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի և Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

Սույն զեկույցի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպությունների տեսակետներին:

Բովանդակություն

Բովանդակություն.....	7
I. Ներածություն.....	5
II. Ընտրական գործընթացի բարելավմանն ուղղված առաջարկություններ.....	10
III. Դիտորդական առաքելության մեթոդաբանությունը	13
IV. Ընտրական օրենսգրքի հետ կապված մտահոգություններ	16
V. Երկարաժամկետ դիտորդության արդյունքներ.....	23
VI. Երկարաժամկետ դիտորդության ընթացքում արձանագրված խախտումների վերաբերյալ գործողություններ.....	31
VII. Քվեարկության օրը կազմակերպական և տեխնիկական բնույթի խախտումների վերաբերյալ դիտարկումներ.....	36
VIII. Տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքի վերաբերյալ դիտարկումներ.....	43
IX. Ընտրական գործընթացի խախտումների վերաբերյալ դիտարկումներ	52
X. Քվեարկության օրը հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմակերպության կողմից իրականացված գործողություններ	61
XI. Հավելվածներ.....	65

I. Ներածություն

2012 թ. մայիսի 6-ին կայացած ՀՀ Ազգային ժողովի հերթական ընտրություններում համամասնական ընտրակարգով մասնակցում էին 8 կուսակցություն և 1 կուսակցական դաշինք: Իսկ 41 մեծամասնական ընտրակարգով առաջադրված էր 137 թեկնածու (*տե՛ս հավելված 1*): Համամասնական ընտրակարգով 5%-ի շեմը հատեցին 4 կուսակցություն և 1 կուսակցական դաշինք (*տե՛ս հավելված 2*): 2012 թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը (այսուհետ՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակ) դիտորդական առաքելություն իրականացրեց Երևան, Գյումրի, Վանաձոր և Իջևան քաղաքներում, ինչպես նաև Լոռու մարզի Վահագնի և Լեռնապատ համայնքներում:

2008 թ. փետրվարի նախագահական ընտրությունների հետ կապված մի շարք խնդիրներ այդպես էլ չլուծվեցին, որի հետևանքով չստեղծվեցին հերթական համապետական ընտրությունների արդար և ազատ անցկացման համար անհրաժեշտ նախապայմաններ: Այդ խնդիրներն են.

- ✓ քաղաքական իրավական գնահատական չտրվեց 2008 թ. մարտի 1-ից 20-ը արտակարգ դրության մասին ՀՀ նախագահի հրամանագրին, որն ընդունվել էր «Արտակարգ դրության մասին» ՀՀ օրենքի բացակայության պայմաններում և հանդիսանում էր ՀՀ սահմանադրության 55 հոդվածի 14-րդ կետի խախտում
- ✓ իրավական գնահատական չտրվեց և պատասխանատվության չենթարկվեցին խաղաղ ցուցարարների նկատմամբ իրավապահ մարմինների կողմից ուժի և բռնությունների գործադրումը 2008 թ. մարտի 1-ի առավոտյան՝ Ազատության հրապարակում և Երևանի կենտրոնական փողոցներում և 2008 թ. մարտի 1-ի երեկոյան՝ Մյասնիկյան հրապարակում և հարակից տարածքներում
- ✓ իրավական գնահատական չտրվեց և չքննարկվեց ՀՀ պաշտպանության նախարարի 0038 գաղտնի հրամանը, որի հիման վրա խաղաղ ցուցարարների նկատմամբ օգտագործվեցին զինված ուժերի ստորաբաժանումները
- ✓ չբացահայտվեցին 2008 թ. մարտի 1-ի երեկոյան 10 հոգու սպանության հանգամանքները, դրանց մեղավորները և հանցագործությունը և նրա կատարողները մնացին անպատիժ
- ✓ 2008 թ. նախագահական ընտրություններին հաջորդող հետընտրական ժամանակաշրջանում քաղաքական ընդդիմության ներկայացուցիչների նկատմամբ հետապնդումները, այդ թվում ձերբակալությունները, կալանքները և ազատազրկման վերաբերյալ դատավճիռներին չտրվեց իրավական գնահատական
- ✓ մինչև վերջ չկատարվեցին ԵԽԽՎ 1609, 1620, 1648, 1677 բանաձևերով սահմանված առաջարկությունները և պահանջները
- ✓ 2008 թ. նախագահական ընտրություններից հետո տասնյակ քաղաքական բանտարկյալներ բանտերից ազատվեցին ոչ թե արդար դատաքննության արդյունքում, այլ ներման և համաներման տարբեր որոշումներով, այսինքն չվերականգնվեց դատական իշխանության նկատմամբ քաղաքացիների վստահությունը

- ✓ պետական բոլոր հաստատությունների և հիմնարկների (կրթական, բժշկական հաստատությունների, թաղամասային հիմնարկների, գյուղապետարանների և այլն) ողջ ղեկավար կազմը և աշխատակիցների գերակշիռ մասը հանդիսանում էին իշխող կոալիցիայի՝ Հայաստանի հանրապետական կուսակցության, Բարգավաճ Հայաստան կուսակցության, և Օրինաց երկիր կուսակցության անդամները: Վարչական լծակների գերակշիռ մասը պատկանում էր Հայաստանի հանրապետական կուսակցությանը: Մի հանգամանք, որը հակասում է 1990 թ. Եվրոպայի անվտանգության ու համագործակցության խորհրդակցության (ԵԱՀԽ) մարդկային չափանիշի խորհրդատու Վոպենհագենի խորհրդակցության փաստաթղթում ամրագրված 5,4 սկզբունքին, ըստ որի պետությունը և քաղաքական կուսակցությունը չպետք է միաձուլվեն
- ✓ 2008 թ. նախագահական ընտրություններից հետո չվերականգնվեցին իրենց քաղաքական դիրքորոշման պատճառով աշխատանքից ապօրինի ազատված քաղաքացիների իրավունքները, որը հանդիսանում է 1990 թ. Վոպենհագենյան փաստաթղթի հիմնարար դրույթների խախտում՝ ազատ կամքի արտահայտման սահմանափակում
- ✓ Չապահովվեց ԵԽԽՎ 1620 բանաձևում ամրագրված և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացրած որոշումը՝ Ա1+ հեռուստաընկերության հեռուստատեսային հաղորդումների հեռարձակման վերսկսման պահանջի վերաբերյալ:

Նշված խնդիրների առկայությամբ և չլուծվածությամբ չստեղծվեցին անհրաժեշտ նախապայմաններ՝ ընտրությունների նկատմամբ քաղաքացիների վստահության բարձրացման և վախի մթնոլորտի հաղթահարման համար: Ավելին 2012 թ. մարտի 23-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից արագ ընթացակարգով ընտրությունների նախօրեին ընդունվեց «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքը, որը չնայած բազմաթիվ բողոքներին և քննադատություններին՝ այդ թվում Վենետիկի հանձնաժողովի քննադատություններին, թույլատրեց զինված ուժերի կիրառումը արտակարգ դրության ռեժիմի պայմաններում, նսեմացվեց խորհրդարանի վերահսկողության դերը արտակարգ դրության ռեժիմի ժամանակ, որն, ըստ էության, չէր կարող դրական ազդեցություն ունենալ առաջիկա ընտրությունների նկատմամբ քաղաքացիների վստահության վրա:

2012 թ. Ազգային ժողովի ընտրություններին նախորդած ժամանակաշրջանում այդպես էլ չլուծվեց կուսակցությունների ֆինանսական միջոցների թափանցիկության հարցը, որը բացասական ազդեցություն ունեցավ ոչ միայն քաղաքական կուսակցությունների նկատմամբ ընտրողների վստահության մակարդակի վրա, այլև մեծացրեց քաղաքական կոռուպցիայի ռիսկերը: 2011 թ. «Global Integrity» զեկույցում նշվում է Հայաստանի Հանրապետությունում կուսակցությունների և անհատ թեկնածուների ֆինանսավորման վերահսկողությունը չափազանց ցածր է: Ի դեպ ՀՀ նոր ընտրական օրենսգրքի վերաբերյալ 2011 թ. ապրիլի 20-ի եզրակացություններում Վենետիկի հանձնաժողովն առաջարկել է ընդլայնել քարոզչության համար թույլատրելի ծախսերի ցանկը՝ ներառելով «մարքեթինգի համար նախատեսված ծառայությունները, քարոզչական գրասենյակները, քարոզչության մարտավարության մշակման արտաքին օժանդակումը, ճամփորդական ծախսերը և ցանկացած այլ ծախս, որը կարող է



առաջանալ ընտրվելու ջանքերի ընթացքում», որը հնարավորություն կտար բարձրացնել կուսակցությունների և թեկնածուների ֆինանսական հաշվետվողականությունը: Սակայն Վենետիկի հանձնաժողովի կողմից առաջարկված այս դրույթը չներառվեց ընտրական օրենսգրքում:

Յուրաքանչյուր համապետական ընտրությունից առաջ ընտրական օրենսգրքում կատարվում են փոփոխություններ, որոնք սակայն, ինչպես ցույց է տվել փորձը, չեն հանդիսանում ազատ և արդար ընտրությունների բավարար երաշխիք:

Ըստ այդմ, մինչ ԱԺ ընտրությունների նախընտրական քարոզչության մեկնարկը՝ «ընտրությունների ընթացքում պատշաճ հասարակական կարգուկանոն հաստատելու, ընտրությունների բնականոն ընթացքն ապահովելու նպատակով» ՀՀ ոստիկանությունում ստեղծվեց օպերատիվ շտաբ, իսկ ընտրախախտումների վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և քննարկման նկատմամբ դատախազական հսկողություն իրականացնելու համար ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ստեղծվեց աշխատանքային խումբ:

Թե՛ նախընտրական շրջանում, թե՛ քվեարկության օրը Հայաստանի Հանրապետության տարբեր վայրերից ստացվում էին ընտրակաշառքների վերաբերյալ բազմաթիվ ահազանգեր, որը վկայում էր դրանց զանգվածային բնույթի մասին: Այնուամենայնիվ, ընտրակաշառքների նման զանգվածային տարածվածության դեպքում իրավապահ մարմինների կողմից հանրությանը չներկայացվեց դրանց կանխարգելման ուղղությամբ «օպերատիվ հետախուզության մասին» օրենքով սահմանված լիազորությունների իրականացման արդյունավետությունը վկայող հաշվետվություն: Ավելին՝ ընտրական խախտումների վերաբերյալ հաղորդումների մեծամասնությունն անտեսվեց կամ քննվեց ընտրություններից հետո շատ ավելի ուշ, որն ըստ էության որևէ ազդեցություն չէր կարող ունենալ ընտրախախտումների կանխարգելման և ընտրությունների օրինականության տեսակետից: Ըստ էության իրավապահ մարմինների անհետևողականությամբ և ստացված հաղորդումների ոչ պատշաճ քննությամբ լեգիտիմացվեց զանգվածային ընտրակաշառքը, որը վկայում է իրավապահ մարմինների հրահանգավորված անգործության և միաժամանակ, ոչ պրոֆեսիոնալիզմի մասին:

Զանգվածային բնույթ կրեցին իշխող քաղաքական կուսակցությունների՝ ՀՀԿ, ԲՀԿ և ՕԵԿ կողմից նախընտրական բարեգործության դեպքերը, որոնք պատշաճ ուշադրության չարժանացան թե՛ իրավապահների, թե՛ հանձնաժողովների կողմից: 2012 թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում գրանցվել են կեղծ բարեգործության բազմաթիվ դեպքեր: Ի դեպ, բարեգործությունների իրականացման կամ նման խոստման մասին տեղեկացրել են հենց նախընտրական շտաբերի ներկայացուցիչները, ինչը վկայում է այն մասին, որ կուսակցություններն իրենք չեն գիտակցում նման քայլերի անօրինականությունը կամ լիովին վստահ են, որ այդ գործողություններն անպատժելի են մնալու:

Նախընտրական շրջանում տարբեր կուսակցությունների և կազմակերպությունների կողմից եղան բազմաթիվ ահազանգեր, ընտրացուցակներում ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների ուռճացված թվի, մեկ հասցեում հաշվառված մինչև 100 քաղաքացիների

վերաբերյալ: Ընտրացուցակներում անճշտությունների առկայության փաստը հերքել է միայն Հայաստանի հանրապետական կուսակցությունը: Այդպես էլ չբացատրվեց նախորդ համապետական ընտրությունների համեմատ ընտրողների թվի մեծացումը՝ հաշվի առնելով փաստացի բնակչության թվի նվազեցման հանգամանքը: Ավելին՝ չառանձնացվեցին հանրապետությունից բացակայող ընտրողների ցուցակները առկա ընտրողների ցուցակներից, որը հնարավորություն կտար վերահսկել և կանխել բացակա ընտրողների փոխարեն քվեարկելու դեպքերը: Մյուս կողմից՝ հանրապետությունից բացակայող ընտրողների ցուցակում ընդգրկվելու, սակայն հանրապետության տարածքից դուրս նրանց քվեարկության իրավունքից զրկելը վերստին չունեւ որևէ տրամաբանություն, որովհետև ընտրությանը մասնակցելու նրանց իրավունքը ճանաչված էր ընտրացուցակներում նրանց ընդգրկելու փաստով, բայց նրանց իրավունքի կիրառման հնարավորություն չտրվեց, այսինքն, տեղի ունեցավ ընտրողների իրավունքների սահմանափակում և խտրականության դրսևորում ըստ փաստացի բնակչության վայրի:

Իշխող Հայաստանի հանրապետական կուսակցության ներկայացուցիչների կողմից վարչական ռեսուրսների օգտագործման վերաբերյալ ահազանգերը վերաբերել են դահլիճների, շինությունների օգտագործմանը, որոնք մատչելի չեն եղել այլ թեկնածուների և կուսակցությունների համար: Վարչական լծակների կիրառմամբ բյուջետային հիմնարկների՝ կրթական և բժշկական հաստատությունների աշխատակիցներին, նաև աշակերտներին, ուսանողներին և մանկապարտեզների սաներին հարկադիր ստիպել են մասնակցել Հայաստանի հանրապետական կուսակցության հավաքներին: Բյուջետային հիմնարկների աշխատակիցներին ներգրավել են իշխող կուսակցության նախընտրական քարոզչության գործընթացին, իսկ քվեարկության օրը նրանց միջոցով իրականացվել է ընտրողների ուղղորդված տեղափոխություն ընտրական տեղամասեր և մասնակցություն քվեարկությանը: Դա դրսևորվել է նաև մի շարք տեղամասերում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահների կողմից բացակա ընտրողների վերաբերյալ տվյալների հաղորդման և բացակա ընտրողների «բերման ենթարկելու» փաստերով: Քվեարկության պրոցեսի վրա բացասական ազդեցություն է թողել նաև այն հանգամանքը, որ որպես տեղամասային հանձնաժողովի անդամներ հիմնականում ներգրավվում են տվյալ համայնքի վարչական մարմինների, դպրոցների թաղամասային հիմնարկների աշխատակիցներ, որոնք ճանաչում են տվյալ համայնքի ընտրողներին և ուղղակի ազդեցություն ունեն նրանց վրա:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները և նախագահները հիմնականում հայտարարել են, որ իրենք պատասխանատու չեն ընտրատեղամասից դուրս կատարվող գործողությունների համար՝ ըստ էության՝ անգործություն ցուցաբերելով քաղաքացիների դեպի տեղամաս ուղղորդված հոսքի, կուտակումների և տեղամասի հարակից տարածքում քարոզչության դեպքերի կանխարգելման ուղղությամբ: Ի դեպ, ընտրական տեղամասի հարակից տարածքում ընտրողների ուղղորդված հոսքի, բերման ենթարկելու, կուտակումների ուղղությամբ փաստերը անուշադրության են մատնվել նաև տեղամասում գտնվող ոստիկանների կողմից:

Քվեարկության օրը՝ հատկապես առավոտյան ժամերին, ընտրական տեղամասերից ստացվեցին բազմաթիվ ահազանգեր, անձնագրի մեջ դրվող կնիքի թանաքի ժամկետից՝ 12 ժամից շուտ անհետացման մասին: Ըստ նոր ընտրական օրենսգրքի նախատեսվում էր, որ

Թանաքը պետք է ցնդեր քվեարկելուց առնվազն 12 ժամ հետո, որպեսզի բացառվեր կրկնաքվեարկությունը: Թանաքի ժամկետից շուտ անհետացման փաստը արդեն իսկ մեծացրեց քվեարկության պրոցեսի նկատմամբ անվստահությունը, քանի որ մեծացավ նաև կրկնաքվեարկության հնարավորությունը բացակա քվեարկողների փոխարեն:

Քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ տարբեր տեղամասերում հայտնաբերվեցին մեծ քանակությամբ դատարկ ծրարներ, որը վկայում է, որ ընտրությունների ընթացքում «կարուսելը» լայն կիրառում է ունեցել (այսինքն՝ դատարկ քվեաթերթիկը դուրս է բերվել տեղամասից և ներս է բերվել արդեն քվեարկած), այդպիսով անմիջականորեն կանխորոշվել է անձի քվեարկության արդյունքը՝ խախտելով նրա կամքի ազատ արտահայտման իրավունքը:

Կարող ենք արձանագրել, որ տեղամասային ընտրական հանձնաժողովները չնայած բազմակուսակցական կազմին, շատ քիչ բացառություններով դրսևորում էին միակուսակցական վարքագիծ, միաժամանակ հանձնաժողովները տրամադրված չէին ընտրախախտումները կանխելուն և խախտումները որոշ դեպքերում վերացվում էին միայն դիտորդների կողմից բազմաթիվ ահազանգերի արդյունքում: Մտահոգիչ է, տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և անդամների ոչ պատշաճ իրազեկվածությունը ընտրական օրենսգրքի վերաբերյալ:

Այսպիսով, ելնելով վերը շարադրվածից, ՀՔԱ Վանաձորի գրասենյակը գտնում է՝

- ✓ 2012 թ. մայիսի 6-ի ԱԺ ընտրությունները չեն եղել ազատ և արդար
- ✓ վերը նշված գործոնները բացասաբար են ազդել ընտրության արդյունքների վրա:
- ✓ ընտրության արդյունքները չեն արտահայտում ընտրողների ակնկալիքները
- ✓ այս ընտրություններում ավելի խորացավ ընտրողների անվստահությունը և հիասթափությունը ընտրական գործընթացի նկատմամբ:

II. Ընտրական գործընթացի բարելավմանն ուղղված առաջարկություններ

2011 թ. ընդունվել է ՀՀ ընտրական նոր օրենսգիրքը, որն էականորեն տարբերվում է հին օրենսգրքից: Սույն զեկույցում կազմակերպության կողմից ներկայացվում են նոր օրենսդրության հետ կապված կազմակերպության մտահոգությունները, ինչպես նաև դիտարկված տեղամասերում արձանագրված թերացումները: Դրանց վերլուծության հիման վրա կազմակերպությունը ներկայացնում է մի շարք առաջարկություններով, որոնք ներկայացվում են ստորև.

1. Դիտորդական առաքելության կարգավորման վերաբերյալ օրենսդրական առաջարկություններ

Սույն զեկույցի IV գլխի 3. կետում ներկայացվում է դիտորդական առաքելության նկատմամբ անհարկի սահմանափակումների առկայության խնդիրը, մասնավորապես՝ դիտորդական առաքելություն իրականացնելու համար համապատասխան մասնագիտացված դասընթաց անցնելու և որակավորման քննություն հանձնելու պահանջը, ինչպես նաև այն դրույթը, որ «դիտորդի կողմից որևէ թեկնածուի, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության, կուսակցությունների դաշինքի աջակցելու դեպքում ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը իրավունք ունի կազմակերպությանը զրկելու դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքից» (*տե՛ս ՀՀ ԸՕ 30-րդ հոդվածի 5-րդ մասը*):

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը գտնում է, որ սույն դրույթները խոցելի են դարձնում դիտորդական առաքելությունը և կարող են տարաբնույթ կամայականությունների տեղիք տալ: Հաշվի առնելով դիտորդի իրավունքների խիստ սահմանափակ լինելը՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակն առաջարկում է.

- ✓ վերացնել դիտորդական առաքելություն իրականացնելու համար որակավորման քննություն հանձնելու պահանջը՝ և դիտորդական առաքելություն իրականացնելու հավատարմագիր տրամադրել կազմակերպությանը՝ հիմնվելով կազմակերպության կանոնադրական նպատակների համապատասխանության վրա
- ✓ ընթացք տալ դիտորդների կողմից արձանագրված խախտումները վերացնելու վերաբերյալ դիմումներին և վերացնել խախտումը անկախ նրանից, թե ում սուբյեկտիվ իրավունքն է խախտված, և թե ով է դիմում այն վերացնելու պահանջով
- ✓ սահմանել, որ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունն ինքն է պատասխանատու որակյալ և անաչառ դիտորդների ներգրավման համար, և կազմակերպությունն ինքը պետք է պատասխանատու լինի դիտորդական առաքելության պատշաճ և օբյեկտիվ կատարման համար: Ըստ այդմ, կենտրոնական ընտրական հանձնաժողովը կարող է վարչական տույժեր սահմանել առանձին դիտորդների կողմից դիտորդական առաքելության անաչառության սկզբունքը խախտելու զանցանքի համար:

2. Վատ վարչարարության վերացման վերաբերյալ օրենսդրական առաջարկություններ

Հաշվի առնելով սույն զեկույցի IV գլխի 4. կետում ներկայացված մտահոգությունները և դիտարկված տեղամասերում արձանագրված խնդիրները՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակն առաջարկում է՝

- ✓ տեղամասային ընտրական հանձնաժողովների բոլոր անդամների համար կազմակերպել ինտենսիվ և երկարատև մասնագիտական դասընթացներ՝ ընտրական օրենսգրքի պահանջներին և ընտրական գործընթացի առանձնահատկություններին լիարժեք տիրապետելու համար
- ✓ տեղամասային ընտրական հանձնաժողովներում ներգրավել տվյալ համայնքում չբնակվող անդամների՝ քվեարկության գործընթացի անօրինական կառավարելիությունը նվազեցնելու և ընտրական գործընթացի օբյեկտիվությունն ու պրոֆեսիոնալիզմը բարձրացնելու նպատակով
- ✓ հստակեցնել տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների գործառույթների փոփոխման կարգը և պրակտիկայի համապատասխանությունը օրենքի պահանջներին:

3. Քվեարկության արդյունքների ամփոփման նիստի հետ կապված անորոշության վերացմանն ուղղված առաջարկություններ

Նշելով քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց շրջանակը՝ ընտրական օրենսգրքը, այնուամենայնիվ, չի հստակեցնում տեղամասի փակվելուց հետո տեղամաս ելումուտի գործընթացը: Այդ պատճառով կազմակերպությունն առաջարկում է.

- ✓ լրացնել օրենսդրական բացը և հստակեցնել, թե քվեարկության արդյունքների հաշվարկի և ամփոփման ընթացքում ներկա գտնվող անձինք երբ և ինչպես կարող են մուտք գործել ընտրատեղամաս:

4. Քվեաթերթիկներում «Բոլորին դեմ եմ» տողի ներառման վերաբերյալ առաջարկություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը գտնում է, որ քվեաթերթիկում «Բոլորին դեմ եմ» տողի բացակայությունը բազմաթեկնաձու ընտրություններում սահմանափակում է քաղաքացիների կողմից երկրի իշխանությունը ձևավորելու սահմանադրական իրավունքը: Այդ իսկ պատճառով կազմակերպությունը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով «Բոլորին դեմ եմ» տողի բացակայության սահմանադրականությունը: ՀՔԱ Վանաձորի գրասենյակն առաջարկում է.

- ✓ «Բոլորին դեմ եմ» տողը ներառել բոլոր տեղական և համապետական ընտրությունների քվեաթերթիկներում՝ անկախ ներկայացված թեկնածուների քանակից և վերանայել քվեարկության արդյունքների ամփոփման կարգը՝ «Բոլորին դեմ եմ» ընտրությունը համարելով լիովին վավեր:

5. Ընտրացուցակների և ընտրական իրավունքի վերաբերյալ առաջարկություններ

Սույն զեկույցի IV գլխի 3. կետում ներկայացվում է ընտրացուցակների կազմման և քվեարկության թույլատրման կարգը, որն ըստ էության խտրական վերաբերմունք է ցուցաբերում ընտրողների նկատմամբ և կարող է չարաշահումների պատճառ դառնալ: Ելնելով ներկայացված մտահոգություններից՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակն առաջարկում է.

- ✓ ընտրողների ցուցակները կազմելիս՝ բացակա ընտրողների համար կազմել առանձին ցուցակ, և հնարավորություն տալ այդ քաղաքացիներին քվեարկությանը մասնակցել այն նույն կարգով, որը նախատեսված է դիվանագիտական ներկայացուցիչների աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց (անկախ սեփականության ձևից) արտասահմանում տեղակայված ներկայացուցչությունների աշխատակիցների քվեարկության համար, ինչպես նաև այդ առանձին ցուցակը հրապարակել քաղաքացիների գրանցման վայրի համապատասխան տեղամասում
- ✓ զինվորականների ընտրացուցակներն առանձին և գաղտնի պահելու փոխարեն դրանք դիսպերսել ընդհանուր ցուցակում՝ այդպիսով նվազեցնելով լրացուցիչ ցուցակներով բազմակի քվեարկության դեպքերը
- ✓ ընտրություններից հետո հրապարակել ընտրացուցակները՝ հնարավորություն ընձեռելով տեսնելու ընտրությունների մասնակցության իրական պատկերը:

III. Դիտորդական առաքելության մեթոդաբանությունը

Կարևորելով ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների դերը՝ որպես ժողովրդավարության կարևորագույն նախապայմաններից մեկը՝ Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակն արդեն երկար տարիներ իրականացնում է ընտրությունների դիտարկումներ ՀՀ տարածքում:

«2012 թ. խորհրդարանական ընտրությունների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության կարողությունների զարգացում» ծրագիրը ևս մեկ քայլ էր՝ ապահովելու քաղաքացիական վերահսկողություն ժողովրդավարական գործընթացների նկատմամբ՝ ազատ, արդար և թափանցիկ ընտրություններին նպաստելու նպատակով, ինչպես նաև գնահատելու ընտրությունների համապատասխանությունը եվրոպական չափանիշներին: Ծրագիրն իրականացվել է Քաունթերփարթ ինթերնեշնլ Հայաստանի, Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի և Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ: 2012 թ. մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունների ընթացքում դիտորդական առաքելության նպատակն էր իրականացնել.

- ✓ ընտրական իրավունքների խախտումների կանխարգելում
- ✓ խախտված ընտրական իրավունքների վերականգնմանն ուղղված աշխատանքներ
- ✓ ընտրական գործընթացներում քրեորեն հետապնդելի գործողությունների բացահայտում և բողոքարկում իրավապահ մարմիններին
- ✓ դիտորդական առաքելության իրականացման մեխանիզմների կատարելագործում
- ✓ դիտորդական առաքելության՝ որպես ընտրական գործընթացների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ինստիտուտի ընդլայնում
- ✓ ընտրական օրենսգրքի թերությունների բացահայտում
- ✓ բացահայտված ընտրական խախտումների բացառման և կանխարգելման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում

Այս նպատակով կազմակերպությունն իրականացրել է երկարաժամկետ դիտորդություն Վանաձոր քաղաքում նախընտրական քարոզչության ընթացքում՝ 2012 թ. ապրիլի 8-ից մայիսի 5-ն ընկած ժամանակահատվածում՝ 10 դիտորդների միջոցով: Երկարաժամկետ դիտորդության նպատակն էր՝ ուսումնասիրել ընտրական օրենսգրքով սահմանված մեծամասնական համակարգով առաջադրված թեկնածուների և կուսակցությունների հավասար հնարավորությունների իրավունքի իրականացումը նախընտրական քարոզչության ընթացքում: Երկարաժամկետ դիտորդությունն իրականացվել է հարցազրույցների և դիտարկումների միջոցով:

2012 թ. ապրիլի 8-ից մինչև 2012 թ. մայիսի 5-ը կազմակերպության դիտորդների կողմից լրացվել է ԱԺ ընտրությունների նախընտրական քարոզչության 77 դիտարկման քարտ (*տե՛ս հավելված 3*), որից՝

- ✓ հարցազրույց է իրականացվել նախընտրական քարոզչություն իրականացնող 6 թեկնածուների հետ

- ✓ դիտարկվել է նախընտրական քարոզչություն իրականացնող թեկնածուի 28 հանդիպում ընտրողների հետ
- ✓ դիտարկվել է նախընտրական քարոզչություն իրականացնող կուսակցության 12 հանդիպում ընտրողների հետ
- ✓ հարցազրույց է իրականացվել նախընտրական քարոզչություն իրականացնող թեկնածուների 6 նախընտրական շտաբի ղեկավարի /աշխատակցի հետ
- ✓ հարցազրույց է իրականացվել նախընտրական քարոզչություն իրականացնող կուսակցության 25 նախընտրական շտաբի ղեկավարի /աշխատակցի հետ:

Յուրաքանչյուր հարցազրույցի և հանդիպման վերաբերյալ լրացվել է դիտարկման քարտ, որի արդյունքները կներկայացվեն հաջորդիվ: Դիտարկման ընթացքում արձանագրած մի շարք փաստերի առնչությամբ կազմակերպությունը գրություններ է ուղարկել համապատասխան մարմիններին՝ պարզելու այդ փաստերի օրինականությունը: Մասնավորապես կազմակերպության կողմից ուղարկվել է 9 տեղեկատվական հարցում և 4 դիմում-բողոք, բոլոր գրություններին ստացվել է լիարժեք պատասխան, իսկ քարոզչական նյութերի վերաբերյալ դիմում-բողոքները քննարկվել են: Տրանսպորտային միջոցներում քարոզչական նյութերի առկայության վերաբերյալ բողոքը բավարարվել է, սակայն խախտումները վերացվել են միայն Սպիտակ քաղաքում:

Կարճաժամկետ դիտորդական առաքելության իրականացման համար դիմել է 150 քաղաքացի, որոնցից 18-ը ունեին դիտորդական վկայական: Դիտորդական առաքելության իրականացման համար ընտրվել է 119 թեկնածու, որոնցից 113-ի միջոցով նախատեսվում էր դիտորդական առաքելություն իրականացնել Հայաստանի 4 քաղաքային համայնքներում: Կարճաժամկետ դիտորդության նախապատրաստական փուլում 16 դիտորդ չի մասնակցել որակավորման քննությանը, նրանցից 4-ը հրաժարվել են դիտորդական առաքելությունից 2012 թ. ապրիլի 12-ին Գյումրիում գրանցված սպանությունից հետո, իսկ մյուս 12-ը հրաժարվել են ադրբեջանական ֆիլմերի ցուցադրման դեմ 2012 թ. ապրիլի 16-ին տեղի ունեցած բողոքի ակցիայից և ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նկատմամբ հարձակումից հետո: Դիտորդական վկայական ստացածներից 7-ը անհայտ պատճառներով հրաժարվել են դիտորդական առաքելություն իրականացնելուց: Եվս 5 դիտորդ դիտորդական առաքելությունից հրաժարվել է քվեարկության օրը: Արդյունքում՝ 2012 թ. մայիսի 6-ին 91 կարճաժամկետ դիտորդ դիտորդություն է իրականացրել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա թիվ 7 ընտրատարածքի, ինչպես նաև Իջևան, Գյումրի, Վանաձոր քաղաքների և Լոռու մարզի Վահագնի և Լեռնապատ գյուղերի թվով 64 ընտրատեղամասերում (տե՛ս հավելված 4): Կազմակերպության շրջիկ դիտորդները դիտարկել են նաև այլ տեղամասեր և տեղամասերի հարակից տարածքներ:

Կարճաժամկետ դիտորդությունն իրականացվել է միասնական դիտարկման քարտերի միջոցով, որոնք առաջին անգամ որպես միասնական գործիք մշակվել և կիրառվել են 2012 թ. մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունները դիտարկող մի շարք հասարակական կազմակերպությունների կողմից: Դիտարկման քարտի միջոցով հավաքագրվել է տեղեկատվություն քվեարկության գործընթացի ամբողջ ընթացքի վերաբերյալ՝ 2012 թ. մայիսի 6-ի ժամը 7:00-ից մինչև ամփոփիչ արձանագրությունների կազմման պահը (տե՛ս հավելված 5):

Դիտարկման քարտ լրացվել է դիտարկված տեղամասերից 63-ում: Դիտարկման քարտերի տվյալներն ամփոփված են սույն զեկույցի VII, VIII և IX գլուխներում:

Դիտորդական առաքելության իրականացման ընթացքում կարևոր մեթոդ է եղել նաև քաղաքացիների կամ դիտորդների կողմից ընտրախախտումների վերաբերյալ ահազանգերի հիման վրա կազմակերպության կողմից իրականացվել է արագ արձագանքում և գրությունների հղումը պատկան մարմիններին: Քվեարկության օրը կազմակերպությունը խախտումը վերացնելու վերաբերյալ 9 դիմում է ուղարկել, որից 4-ի դեպքում մինչ օրս պատասխան չի ստացվել: Ներկայացվել է նաև 4 հաղորդում խախտման վերաբերյալ, որոնց վերաբերյալ ստացվել է պատասխան: Ընտրակաշառքների վերաբերյալ ստացված բոլոր ահազանգերի դեպքում կազմակերպության դիտորդները այցելել են նշված վայր, որոշ դեպքերում հնարավոր է եղել տեսագրել կամ լուսանկարել քաղաքացիների կազմակերպված, ակտիվ հոսքը նախընտրական շտաբեր:

IV. Ընտրական օրենսգրքի հետ կապված մտահոգություններ

2011 թ. մայիսին ընդունվել և 2011 թ. հունիսին ուժի մեջ է մտել ՀՀ ընտրական նոր օրենսգրքը, որն էականորեն տարբերվում է հին օրենսգրքից: 2012 թ. մայիսի 6-ի ընտրությունների ժամանակ նոր ընտրական օրենսգրքի կիրարկման արդյունքում պարզվել է, որ օրենսդրությունն իր մեջ ներառում է մի շարք թերություններ և բացեր, որոնք սահմանափակում են ընտրական գործընթացին մասնակցող անձանց իրավունքները: Ստորև ներկայացնում ենք կազմակերպության կողմից արձանագրված մի շարք մտահոգություններ:

1. Օրենսդրության սահմանափակումներ՝ կապված դիտորդական առաքելության հետ

Չնայած որոշ բարեփոխումներին՝ նոր օրենսդրությամբ մի շարք սահմանափակումներ են դրվել դիտորդական առաքելության իրականացման վրա: Մասնավորապես, նախկին օրենսդրությունը սահմանում էր մի նորմ, համաձայն որի՝ դիտորդը և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչը չէին կարող պատասխանատվության ենթարկվել ընտրությունների ընթացքի և արդյունքների ամփոփման վերաբերյալ իրենց հայտնած կարծիքի համար, սակայն 2011 թ. փոփոխությունների արդյունքում վերը նշված նորմը ընդհանրապես հանվել է:

ՀՀ ընտրական նոր օրենսգրքով նաև սահմանափակվել է դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների մի շարք իրավունքներ՝ մասնավորապես դիտորդները ընտրական հանձնաժողովների նիստերին, իսկ քվեարկության ընթացքում նաև քվեարկության սենյակում կարող են ներկա գտնվել, եթե ստուգարքի արդյունքում ստացել են ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայական կամ դիտորդական առաքելություն իրականացնելու վկայական (*տե՛ս ՀՀ ԸՕ 31-րդ հոդվածի 1-ի մասի 1-ին կետը*):

ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ դիտորդն իրավունք չունի միջամտելու ընտրական հանձնաժողովի աշխատանքներին, սակայն իրավունք ունի դիտարկումներ կատարելու և իր առաջարկությունները ներկայացնելու հանձնաժողովի նախագահին (*տե՛ս ՀՀ ԸՕ 31-րդ հոդվածի 3-րդ կետը*): Հետևաբար, դիտորդական առաքելության իրականացման համար սահմանված սահմանափակ իրավունքների առկայության դեպքում անհրաժեշտություն չկա օրենսդրությանը տիրապետել այնքանով, որքանով հանձնաժողովի անդամները, կամ դիտորդական առաքելություն իրականացնելու համար անցնել համապատասխան մասնագիտացված դասընթաց և հանձնել որակավորման քննություն՝ ընտրական գործընթացին որպես դիտորդ մասնակցելու իրավունքի ձեռքբերման համար: Ի վերջո, այս պահանջով սահմանափակվում է նաև քաղաքացու կողմից իշխանության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության իրականացման հնարավորությունը: ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի պետք է, առանց որոշակի մասնագիտական գիտելիքների տիրապետելու պահանջի, հնարավորություն ունենա վերահսկելու իր երկրում իրականացվող ժողովրդավարական գործընթացները, որի իրավունքը նրան տալիս է ՀՀ Սահմանադրությունը, և որն ամրագրված է ՀՀ միջազգային պարտավորություններում: Ի դեպ, սույն դրույթի վերաբերյալ մտահոգություն է ներկայացվել նաև Վենետիկի հանձնաժողովի կողմից, որը մասնավորապես նշում է. «ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը և Վենետիկի հանձնաժողովը մտահոգված են ցանկացած իրավական դրույթով, որը կարող է

վերաբերել թափանցիկության սահմանափակմանը՝ սահմանափակելով պոտենցիալ դիտորդների թիվը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը և Վենետիկի հանձնաժողովը առաջարկում են, որ այս դրույթը այնպես ուղղվի, որ դասընթացները հանձնվեն դիտորդ կազմակերպությունների պատասխանատվությանը»:

ՀՀ ընտրական օրենսգրքի մեկ այլ դրույթով սահմանափակվում է խախտումների բողոքարկման հնարավորությունը: ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) կարող է բողոքարկել՝

- 1) յուրաքանչյուր ոք, եթե գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր սուբյեկտիվ ընտրական իրավունքը
- 2) վստահված անձը, եթե գտնում է, որ խախտվել են վստահված անձի կամ իր վստահորդի՝ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքները
- 3) դիտորդը, եթե գտնում է, որ խախտվել են դիտորդի՝ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքները
- 4) հանձնաժողովի անդամը, եթե գտնում է, որ ստորադաս հանձնաժողովը կամ հանձնաժողովը, որի անդամն է ինքը, խախտել է իր կամ այլ անձանց՝ ընտրական օրենսգրքով սահմանված որևէ իրավունք:

Վերը նշված իրավանորմն իր բնույթով սահմանափակում է ընտրական հանձնաժողովի անդամների գործողությունները բողոքարկելու հնարավորությունը այնքանով, որքանով չի խախտվել անձի սուբյեկտիվ իրավունքը: Այսինքն դիտորդը, որը արձանագրում է, որ հանձնաժողովի անդամների գործողությունների հետևանքով խախտվում է որևէ մեկի իրավունքը (ընտրող, ՁԼՄ ներկայացուցիչ, վստահված անձ), չի կարող բողոքարկել, իսկ բողոքարկման արդյունքում ստանում է մերժում, քանի որ չի խախտվել իր սուբյեկտիվ իրավունքը: Այնինչ խախտումները վերացնելու վերաբերյալ բողոքներ ներկայացելու համար չի կարող սահմանափակում դրվել, քանի որ յուրաքանչյուր արարք, որը խախտում է հանդիսանում, պետք է համապատասխան պատասխանատվություն նախատեսի, անկախ այն բանից, թե ում կողմից է այն արձանագրվում և հաղորդվում: Այս սահմանափակումն անընդունելի է հատկապես հաշվի անելով այն հանգամանքը, որ նոր օրենսդրությունը հնարավորություն է տալիս նկարահանել քվեարկության ողջ ընթացքը, բացի ստորագրած ընտրացուցակներից և քվեախցիկներից, հետևաբար քվեասենյակում գտնվելու իրավունք ունեցող ցանկացած անձ, որն արձանագրել է խախտումը և ունի համապատասխան ապացույց պետք է հնարավորություն ունենա դիմելու՝ խախտումը վերացնելու պահանջով:

Դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների նկատմամբ օրենսդրի կողմից անհամաչափ սահմանափակում մտցվեց նաև այն մասին, թե «դիտորդի կողմից որևէ թեկնածուի, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության, կուսակցությունների դաշինքի աջակցելու դեպքում ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը իրավունք ունի կազմակերպությանը զրկելու դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքից» (տե՛ս ՀՀ ԸՕ 30-րդ հոդվածի 5-րդ մասը): Մեկ

դիտորդի գոծողությունների պատճառով կազմակերպությանը դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքից զրկելու նորմի վերաբերյալ կարելի է փաստել, որ այն սահմանափակում է հասարակական կազմակերպությունների կողմից քաղաքացիական վերահսկողության հնարավորությունը, որն էլ իր հերթին կարող է հանգեցնել ոչ արդար և թափանցիկ ընտրությունների անցկացման:

Այնուամենայնիվ պետք է նշել, որ նույն օրենսդրությունը միատեսակ մոտեցում չի ցուցաբերում վստահված անձանց և հանձնաժողովների անդամների նկատմամբ, այսինքն հանձնաժողովի մեկ անդամի կամ վստահված անձի կողմնակալության կամ թերացման դեպքում, այն կուսակցությունը, որի անդամ է հանձնաժողովի տվյալ անդամը կամ վստահված անձը, չի զրկվում հանձնաժողովում անդամ ունենալու իրավունքից: Մինչդեռ, դիտորդների կողմից նկատվել է, որ հանձնաժողովների անդամները՝ անկախ կուսակցական բաշխվածությանը, միատեսակ վարքագիծ են ցուցաբերել և որպես կանոն ներկայացրել են Հայաստանի հանրապետական կուսակցության շահերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակն արձանագրում է, որ օրենսդրությունը խտրական վերաբերմունք է ցուցաբերում դիտորդական առաքելության նկատմամբ՝ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների նկատմամբ տարբեր սահմանափակումներ մտցնելով:

Ի դեպ, կազմակերպության դիտորդական առաքելության իրականացման ընթացքում դիտորդների կողմից արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ տարբեր կազմակերպությունների դիտորդի անվան տակ եղել են ծպտված կուսակցականներ (հիմնականում Հայաստանի հանրապետական և Բարգավաճ Հայաստան կուսակցություններից), որը սակայն անտեսվել է տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից: Մասնավորապես՝ Երևան քաղաքի թիվ 7/16 տեղամասում «Հաղթանակի զավակը»-ի դիտորդ Ս. Ս.-ն ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդին տեղեկացրել է, որ իրականում ներկայացնում է Բարգավաճ Հայաստան կուսակցությունը և չի ցանկացել բարձրաձայնել: Իսկ թիվ 7/10 տեղամասում դիտորդի արձանագրմամբ միաժամանակ գտնվել են 5 կամ ավելի ԲՀԿ կուսակցականներ, որոնք հանդես են եկել որպես դիտորդ/լրագրող «Կենտրոն» ՀԸ-ից, «Maxinfo» լր. գործակալությունից, «Համաչափ զարգ. հանուն զարգ.» ՀԿ-ից և այլ կազմակերպություններից:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը տեղեկացել է նաև, որ Վանաձոր քաղաքում «Ընտրությունը քոնն է» կազմակերպության դիտորդները հավաքագրվել են Լոռու մարզպետարանի աշխատակիցների կողմից: Ըստ կազմակերպության ստացած տեղեկության՝ յուրաքանչյուր դպրոցից հավաքագրվել է 3 ուսուցիչ, որոնց հստակ հրահանգ է տրվել՝ «աշխատել ՀՀԿ-ի օգտին» և անտեսել խախտումները:

Երևան քաղաքի թիվ 7/20 տեղամասում «Էրեբունի» ՀԿ-ի դիտորդ Ա. Հ.-ն հայտնել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդին, որ «պետք է ապահովի իր ցուցակը, նոր հերթափոխը հանձնի»: Դիտորդի այն հարցին, թե ինչ ցուցակի մասին է խոսքը, պատասխանել է, որ խոսքը իր ներկայացրած ընտրող անձանց ցուցակի մասին է:

Ըստ էության այս կազմակերպությունների կողմնակալ գործունեությունը վարկաբեկում է դիտորդական ինստիտուտն ու օբյեկտիվ դիտորդական առաքելություն իրականացնող



կազմակերպություններին: Սակայն ՀՔԱ Վանաձորի գրասենյակը գտնում է, որ հասարակական կազմակերպությունները պետք է անձամբ վերահսկեն իրենց գործունեությունը ու էթիկական սկզբունքները, ինչպես նաև սահմանեն ներքին պատասխանատվության մեխանիզմներ ու չափանիշներ դիտորդների ընտրության համար, իսկ այդ գործառնությունը թերանալու դեպքում կարող են վարչական տույժի ենթարկվել, այլ ոչ թե զրկվել դիտորդական առաքելություն իրականացնելու հնարավորությունից: Այսինքն ընտրական օրենսգիրքը պետք է ապահովի հավասար հնարավորություններ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների և հանձնաժողովի անդամ տրամադրող քաղաքական կուսակցությունների համար, իսկ դիտորդական կազմակերպություններն իրենք պետք է առավելագույնս օբյեկտիվ ու անաչառ լինեն իրենց դիտորդական առաքելության իրականացման ընթացքում՝ ելնելով հասարակական շահի և քաղաքացիական վերահսկողության ապահովման սկզբունքից:

2. Քվեաթերթիկներում «Բոլորին դեմ եմ» տողի ներառման անհրաժեշտությունը

ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին, որն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների և հանրաքվեների միջոցով՝ ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, որի պարագայում, թե՛ օրենսդրական մակարդակում, թե՛ իրավակիրառման պրակտիկայում ստեղծվել է այնպիսի մի իրավիճակ, որ մի դեպքում ընտրողները կարող են իրենց կամքն արտահայտել, իսկ մյուս դեպքում քվեաթերթիկի միջոցով սահմանափակված է ընտրողների կամքի արտահայտումը:

Վերը ներկայացված իրավիճակն է ստեղծվում այն բոլոր դեպքերում, երբ Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցում են մեկից ավելի թեկնածուներ կամ կուսակցություններ: Այն դեպքերում, երբ ընտրություններին մասնակցում է միայն մեկ թեկնածու ընտրողները կարող են դեմ քվեարկել այդ թեկնածուին՝ այդպիսով արտահայտելով իրենց բացասական դիրքորոշումը տվյալ թեկնածուի վերաբերյալ: Իսկ մեկից ավելի թեկնածուների առկայության դեպքում, ընտրողները հնարավորություն ունեն ընտրել միայն ընտրություններին մասնակցող թեկնածուներից կամ կուսակցություններից մեկին, այսինքն՝ կողմ քվեարկել քվեաթերթիկում ներկայացված թեկնածուներից կամ կուսակցություններից մեկի օգտին, հակառակ դեպքում քվեաթերթիկը համարվում է անվավեր և չի ազդում քվեարկության արդյունքների վրա: Այլ կերպ ասած՝ բացասական դիրքորոշումը քվեաթերթիկում ներկայացված թեկնածուների նկատմամբ, որը նույնպես իշխանության իրականացման մեխանիզմ պետք է հանդիսանա, այս դեպքում չի ընդունվում, և քաղաքացին զրկվում է իր իշխանությունն իրականացնելու լեզիտիմ հնարավորությունից:

2012 թ. մայիսի 6-ի ընտրություններում արձանագրվել է անվավեր քվեաթերթիկների բարձր թիվ՝ մասնավորապես Երևան քաղաքում դիտարկված 32 տեղամասերում միջինը 4,1 % քվեաթերթիկ անվավեր է ճանաչվել, իսկ առանձին տեղամասերում գրանցվել է մինչև 9 % անվավեր քվեաթերթիկ: Վանաձոր քաղաքի դիտարկված տեղամասերում քվեաթերթիկների 3,5 %-ն է համարվել անվավեր, իսկ առանձին տեղամասերում գրանցվել է մինչև 6 % անվավեր քվեաթերթիկ (*տե՛ս հավելված 6*): Ըստ կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալների

ընդհանուր անվավեր քվեաթերթիկները կազմել են 3.4 % մինչդեռ առանձին տեղամասերում գրանցվել է մինչև 16 % անվավեր քվեաթերթիկ:

Աղյուսակ 2: Դիտարկված տեղամասերում մասնակցության և անվավեր քվեաթերթիկների ընդհանուր պատկերը

Դիտարկված տեղամասեր	Ընտրողների թիվը	Քվ. մասնակիցների թիվը	Մասնակցության %-ը	Անվավեր քվեաթերթիկների թիվը	Անվավեր քվեաթերթիկների %ը
32 տեղամաս, Երևանի թիվ 7 ընտրատարածք	55774	31961	61.3%	1327	4.2 %
21 տեղամաս, Վանաձոր	35022	19927	56.9%	690	3.5 %
3 տեղամաս, Գյումրի	5147	2496	48.5%	100	4.0 %
8 տեղամաս, Իջևան	14020	9580	68.3%	229	2.4 %
Դիտարկված 63 տեղամաս	109963	63964	57.3%	2346	3.7 %
Ընդհանուր Հայաստան	2524960	1574430	62.4%	53812	3.4 %

Այսինքն, փաստացի 53812 քաղաքացի գրկվել է երկրի ընտրովի մարմինների ձևավորմանը մասնակցելու հնարավորությունից:

Կազմակերպության կողմից ձեռնարկվել է համապետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ «բոլորին դեմ եմ» տողը ավելացնելու վերաբերյալ մի շարք գործողություններ՝ խնդիրը հասարակության և քաղաքական կուսակցությունների ուշադրությանը ներկայացնելու միջոցով: Խնդրի առնչությամբ կազմակերպությունը նաև դատական հայց է ներկայացրել և սպառելով բոլոր ատյանները՝ դիմել է ՀՀ սահմանադրական դատարան:

3. Ընտրացուցակների և ընտրական իրավունքի վերաբերյալ նկատառումներ

2012 թ. հունվարի 31-ին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընդունված թիվ 19-Ն որոշմամբ սահմանվել է համապետական ընտրություններին Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն իրականացնող ընտրողների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքների՝ ընտրելու իրավունք ունեցող անդամների՝ էլեկտրոնային եղանակով քվեարկության մասնակցելու կարգը և ժամկետները:

ԿԸՀ որոշմամբ՝ դիվանագիտական ներկայացուցիչներին և նրանց ընտանիքի անդամներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց (անկախ սեփականության ձևից) արտասահմանում տեղակայված ներկայացուցչությունների՝ ընտրելու իրավունք ունեցող աշխատակիցների և նրանց հետ



արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամներին հնարավորություն է ընձեռնվել մասնակցելու համապետական ընտրություններին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ըստ էության իր այս որոշմամբ խտրականություն է ցուցաբերել ընտրելու իրավունք ունեցող անձանց նկատմամբ, որը դրսևորվել է նրանում, որ ընտրելու սահմանադրությամբ երաշխավորված իրավունքից օգտվելու հնարավորություն է ընձեռնվել հանրապետությունից բացակայող քաղաքացիների մի որոշակի մասի միայն: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քաղաքացիների մեծ մասը գտնվում է արտասահմանում:

ՀՀ ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածը կարգավորում է ընտրողների ցուցակներում ընդգրկվելու կարգը: Համաձայն նշված հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրի հիման վրա կազմվում է համայնքի ընտրողների ցուցակ՝ ըստ ընտրական տեղամասերի, որում սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ընդգրկվում են համապատասխան ընտրության ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք: Հիմնական ընտրացուցակներում ընդգրկվում են նաև այն մարդիկ, որոնք չնայած հաշվառված են ՀՀ-ում, սակայն ժամանակավոր բացակայում են երկրից: Նույն հոդվածի համաձայն՝ համապետական ընտրությունների ժամանակ ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատության ղեկավարը կազմում է ստացիոնար բուժման մեջ գտնվող և ընտրել ցանկացող անձանց ցուցակ: Նույն սկզբունքով կազմվում են պարտադիր և ժամկետային զինծառայողների ցուցակները: Արդյունքում ստացվում է այնպիսի մի իրավիճակ, որ ձևական առումով արտերկրում գտնվող քաղաքացիները հնարավորություն ունեն ընտրելու, քանի որ ներառված են ընտրության իրավունք ունեցող անձանց ցուցակում, սակայն փաստացի գրկված են այդ հնարավորությունից: Մինչդեռ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ լիազոր մարմինը ընտրություններից առաջ ճշտումներ է կատարում ընտրողների ցուցակներում և ունի հավաստի տվյալներ ՀՀ-ից բացակայող ընտրողների մասին, ապա ընտրողների ցուցակները կազմելիս միանգամայն հնարավոր է բացակա ընտրողների համար կազմել առանձին ցուցակ, և հնարավորություն տալ այդ քաղաքացիներին քվեարկությանը մասնակցել այն նույն համակարգով, որը նախատեսված է դիվանագիտական ներկայացուցիչների աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց (անկախ սեփականության ձևից) արտասահմանում տեղակայված ներկայացուցչությունների աշխատակիցների քվեարկության համար: Ցուցակների տարանջատումը նաև հնարավորություն կտա խուսափել հանրապետությունից բացակա քաղաքացիների փոխարեն քվեարկելու փաստերից: Նպատակահարմար է նաև այդ առանձին ցուցակները հրապարակել տվյալ քաղաքացիների հաշվառման վայրի տեղամասերում հիմնական ցուցակին կից:

Թեև ՀՀ ընտրական օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն զինվորական ընտրացուցակները մատչելի չեն, սակայն գտնում ենք, որ կրկնաքվեարկությունից և այլ չարաշահումներից խուսափելու համար, անհրաժեշտ է հրապարակել այդ ցուցակները՝ զինծառայողների անունները անկանոն բաշխելով տվյալ տեղամասի հիմնական ընտրացուցակում՝ այսպիսով ընտրացուցակներն ավելի մատչելի և վերահսկելի դարձնելով:

2012 թ. մայիսի 5-ին ՀՀ սահմանադրական դատարանը բանավոր ընթացակարգով քննել է ընտրություններից հետո ընտրացուցակների հրապարակումն արգելող դրույթի սահմանադրականությունը և մերժել ԱԺ մի խումբ պատգամավորների հայցը՝ հիմնավորելով,

որ ցուցակների հրապարակումը հակասում է քվեարկության գաղտնիության վենետիկյան սկզբունքին, ինչպես նաև կարող է ազդել ընտրողի վարքի վրա և քաղաքական ճնշումների տեղիք տալ¹: Սակայն ՀՔԱ Վանաձորի գրասենյակը գտնում է, որ քվեարկության գաղտնիությունը վերաբերում է ոչ թե քվեարկության փաստին, այլ՝ արդյունքին, բացի այդ, անձնագիրը դրոշմակնքելու պահանջն ինքնին արդեն իսկ բացառում է քվեարկության մասնակցության գաղտնիությունը: Ակնհայտ է նաև, որ ընտրացուցակների գաղտնիության դեպքում չարաշահումների վտանգը շատ ավելի առարկայական է, քան առանձին ընտրողների նկատմամբ ճնշումները կամ ընտրողների վարքի նկատմամբ հնարավոր ազդեցությունը՝ կրկին հաշվի առնելով այն հանգամանքը, որ անձնագրերի դրոշմակնքումն արդեն իսկ գաղտնագերծում է քվեարկության մասնակցությունը: Թեև ՀՀ սահմամադրական դատարանը չի բացառել դատական կարգով ցուցակներն ուսումնասիրելու հնարավորությունը, սակայն ակնհայտ է, որ այդ հնարավորության ընձեռումն արդյունավետ չէ, քանի որ միայն մասնավոր դեպքեր ստուգելու հնարավորություն կտա, մինչդեռ իրական պատկերը հասկանալու համար անհրաժեշտ է, որ այն մատչելի լինի բոլոր քաղաքացիներին: Ակնհայտ է, որ ընտրություններից հետո ընտրացուցակների հրապարակումը ընտրությունների թափանցիկության ապահովման պատրաստակամության վառ վկայություն կլիներ:

¹ [http://tv.am/hy/armeniannews/lraber/3030/ՄԴ-ն%60-ընտրության--հարցով-\(տեսանյութ\)-ՄԴ-ն%60-ըն](http://tv.am/hy/armeniannews/lraber/3030/ՄԴ-ն%60-ընտրության--հարցով-(տեսանյութ)-ՄԴ-ն%60-ըն)



V. Երկարաժամկետ դիտորդության արդյունքներ

2012 թ. մայիսի 6-ի ԱԺ ընտրությունների նախընտրական քարոզչության փուլում կազմակերպության 10 դիտորդներ երկարաժամկետ դիտորդական առաքելություն են իրականացրել Վանաձոր քաղաքում: Որոշ տեղեկություններ հավաքագրվել են նաև այլ մարզերում և քաղաքներում՝ գործընկեր կազմակերպությունների միջոցով:

Վանաձոր քաղաքում և Լոռու մարզում մեծամասնական ընտրակարգով ընտրությանը մասնակցել են 10 թեկնածուներ (թիվ 29 ընտրատարածքում՝ 3 թեկնածու, թիվ 30 ընտրատարածքում՝ 5 թեկնածու, թիվ 31-ում՝ 2 թեկնածու):

Ըստ կազմակերպության դիտարկումների, նախընտրական քարոզչության շրջանում նախընտրական շտաբեր ձևավորվել են բոլոր կուսակցությունների կողմից, որոնք միաժամանակ ծառայել են որպես տվյալ կուսակցությունից մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների նախընտրական շտաբեր: Նախընտրական շտաբերի թիվը, ըստ կազմակերպության դիտարկումների, ներկայացված է *Աղյուսակ 1-ում*: Վանաձոր քաղաքում նախընտրական շտաբ չի ունեցել միայն պատգամավորության թեկնածու Վիկտոր Դալլաքյանը:

Աղյուսակ 1: Կուսակցությունների նախընտրական շտաբերի թիվը

Առաջադրված Կուսակցությունը	ՀՔԱ Վանաձորի դիտարկման արձանագրված քանակը	գրասենյակի արդյունքում շտաբերի քանակը
Բարգավաճ հայաստան կուսակցություն	23	
Ժառանգություն կուսակցություն	1	
Հայ ազգային կոնգրես կուսակցությունների դաշինք	7	
Հայ յեղափոխական դաշնակցություն կուսակցություն	20	
Հայաստանի դեմոկրատական կուսակցություն	1	
Հայաստանի կոմունիստական կուսակցություն	1	
Հայաստանի հանրապետական կուսակցություն	49	
Միավորված հայեր կուսակցություն	1	
Օրինաց երկիր կուսակցություն	15	

Բոլոր հարցված կուսակցությունների և առաջադրված թեկնածուների նախընտրական շտաբերի ղեկավարները նշել են, որ շտաբերում կան և՛ աշխատողներ, և՛ կամավորներ:

1. Խախտումներ՝ կապված քարոզչական պաստառների հետ

Վանաձորի քաղաքապետի կողմից 2012 թ. մարտի 7-ի թիվ 209 որոշմամբ անվճար տեղեր են սահմանվել Վանաձորի քաղաքային համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար (*տե՛ս հավելված 7*): Սակայն արձանագրվել են թեկնածուների և կուսակցությունների քարոզչական պաստառների օրենքով արգելված վայրերում՝ հասարակական սննդի, հասարակական առևտրի օբյեկտների և հասարակական տրանսպորտի վրա կամ ներսում և այլ չնախատեսված վայրերում փակցնելու դեպքեր, ինչպես նաև նշված

խախտումները վերացնելու անհետևողականություն պատկան մարմինների կողմից, մասնավորապես՝

- ✓ պատգամավորության թեկնածու Էդմոն Մարուքյանը կազմակերպության ղիտորդի հետ հարցազրույցում նշել է, որ մտահոգությունը նրանում է, որ օրենքով սահմանված անվճար պաստառներ փակցնելու տեղերը անմատչելի են և նկատելի չեն դարձնում պաստառը հասարակության մեծ հատվածին: Բացի այդ է. Մարուքյանը խախտում է համարել պատգամավորության թեկնածու Վիկտոր Դալլաքյանի կողմից վարչական ռեսուրսների օգտագործումը:
- ✓ արձանագրվել են թեկնածուների և կուսակցությունների քարոզչական պաստառների՝ օրենքով արգելված վայրերում՝ հասարակական սննդի, հասարակական առևտրի օբյեկտների և հասարակական տրանսպորտի վրա կամ ներսում փակցնելու դեպքեր (պատգամավորության թեկնածուներ Արկադի Համբարձումյան, Զոհրաբ Թորոսյան):
- ✓ ըստ ՀԱԿ մեծամասնական թեկնածու Վահագն Մարտիրոսյանի՝ Արկադի Համբարձումյանի քարոզչական պաստառը փակցված է Սպիտակի տարածաշրջանի Կաթնաջուր գյուղի անունը կրող ցուցանակի վրա այնպես, որ գրեթե ծածկում է գյուղի անվանումը:
- ✓ Արկադի Համբարձումյանի քարոզչական պաստառները փակցված են Սպիտակ քաղաքի մուտքի մոտ՝ «Բարի գալուստ Սպիտակ» կամարի վրա:
- ✓ արձանագրվել է, որ Հայաստանի հանրապետական կուսակցության դրոշները ամրացված են հասարակական տրանսպորտի և Սպիտակ-Վանաձոր մայրուղու երկայնքով տեղակայված էլեկտրաայունների վրա:
- ✓ թիվ 30 ընտրատարածքում ինքնաառաջադրված պատգամավորության թեկնածու Էդմոն Մարուքյանի քարոզչական պաստառները նախընտրական քարոզչության ընթացքում պարբերաբար պատռվել են, որի կապակցությամբ թեկնածուն հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել:
- ✓ ըստ թիվ 29 ընտրատարածքում առաջադրված պատգամավորության թեկնածու Վահագն Մարտիրոսյանի, նրա 5 պաստառներից մեկը «գողացել» են Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանի Կաթնաջուր գյուղում:

2. Վատ վերաբերմունք

Նախընտրական քարոզչության ընթացքում պատգամավորության թեկնածու Վահագն Մարտիրոսյանի վստահված անձի նկատմամբ արձանագրվել է վատ վերաբերմունք: Պատգամավորության թեկնածու Վ. Մարտիրոսյանի վստահված անձը ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահին հայտնել է, որ Լեռնապատ գյուղում իր և նրա աջակիցների նկատմամբ Հայաստանի Հանրապետական կուսակցության անդամների և աջակիցների կողմից կիրառվել է բռնություն և սպառնալիքներ՝ սառը զենքի կիրառմամբ:

Վ. Մարտիրոսյանը նաև նշել է, որ Հայոց համազգային շարժում կուսակցության շտաբի աշխատակիցների նկատմամբ սպառնալիքներ և աշխատանքների խոչընդոտներ են եղել, սակայն ոչ բացահայտ:



3. Ընտրացուցակների հետ կապված անճշտություններ

Ընտրացուցակների վերաբերյալ արձանագրվել են մի շարք մտահոգություններ, թե կազմակերպության, և թե՛ կուսակցությունների կողմից, մասնավորապես՝

- ✓ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքէջում տեղադրված ընտրողների ռեգիստրից Վանաձոր համայնքում արձանագրվել են 482 հասցեներ, որոնցից յուրաքանչյուրում հաշվառված են 10 - 61 ընտրող: Վերոհիշյալ հասցեներից 23-ում կազմակերպության ղիտորդների կողմից իրականացվել են ղիտարկումներ: Դիտարկումների արդյունքում պարզվել է, որ նույն հասցում մի քանի առանձնատուն է գտնվում կամ նշված է միայն շենքի համարը, իսկ բնակարանների համարները առանձնացված չեն: Տանտերերի հետ զրույցից պարզվել է, որ հաշվառված ընտրողների մեծ մասը բացակայում են հանրապետությունից կամ հաշվառման ցուցակներում նշված թիվը գերազանցում է իրականում հաշվառված թվին:
- ✓ Դիտարկված շտաբերի ղեկավարները նույնպես մտահոգություն են հայտնել ցուցակների անճշտության վերաբերյալ: Նրանք հիմնականում նշել են Հայաստանից մի քանի տարի բացակայող, ինչպես նաև մահացած անձանց անունները ընտրացուցակներում ընդգրկված լինելու մասին: Այս կապակցությամբ Օրինաց Երկիր կուսակցության կենտրոնական շտաբը դիմել է անձնագրային բաժին՝ խախտումը վերացնելու նպատակով:
- ✓ Հայաստանի Դեմոկրատական կուսակցության շտաբի ղեկավարը ղիտորդի հետ հարցազրույցի ժամանակ նշել է, որ ընտրացուցակներում բավականին շատ են «մեռած հոգիները», նաև հայտնել, որ իրենց ղիտարկման արդյունքում պարզվել է, որ նույն հասցեում գրանցված են 250 հոգի, սակայն այդ հասցեում բնակվողներն այդ անուններն անգամ չեն լսել: Խախտումների մասին տեղեկացվել է ԿԸՀ:
- ✓ Ցուցակներում անճշտության վերաբերյալ ՀՀԿ շտաբի ղեկավարը նշել է, որ ըստ իրենց ղիտարկումների՝ ընտրացուցակներում չկան մահացած անձանց անուն ազգանուններ:

4. Նախընտրական քարոզչության ընթացքում վարչական ռեսուրսների օգտագործում

Վարչական ռեսուրսների օգտագործման ղեպքերը հիմնականում առնչվել են իշխող կուսակցության և նրա մեծամասնական թեկնածուների կողմից վարչական ռեսուրսների, այդ թվում դահլիճների, շինությունների օգտագործման հետ, որոնք անհասանելի կամ դժվար հասանելի են եղել այլ թեկնածուների և կուսակցությունների համար: Միաժամանակ գրանցվել է պետական՝ կրթական և բժշկական հաստատությունների աշխատակիցների հարկադիր մասնակցություն իշխող կուսակցության հավաքներին, նաև մասնակցություն բուն քարոզչությանը:

- ✓ Ըստ հավաքված տեղեկությունների՝ ՀՀԿ շտաբի պետ է նշանակված եղել Վանաձոր քաղաքի 7-րդ դպրոցի փոխտնօրենը:
- ✓ Օրենքով սահմանված կարգով անվճար դահլիճ ստանալիս խոչընդոտներ են ունեցել պատգամավորության թեկնածուներ Էդմոն Մարուքյանը և Աշոտ Մանուկյանը:
- ✓ Ինքնաառաջադրված պատգամավորության թեկնածու Էդմոն Մարուքյանը դիմել է թիվ 1 միջնակարգ դպրոց՝ ընտրողների հետ հանդիպում անցկացնելու նպատակով տարածք

ստանալու համար, սակայն նրան մերժել են պատճառաբանելով, որ անհրաժեշտ է դիմել համայնքի ղեկավարին՝ թույլտվություն ստանալու համար: Հետագայում թեկնածուն տեղեկացել է, որ նույն դպրոցում կայացել է հանդիպում պատգամավորության թեկնածու Վիկտոր Դալլաքյանի հետ: Է. Մարտիքյանը դիմել է համայնքի ղեկավարին՝ ստանալու Վիկտոր Դալլաքյանին տրամադրած թիվ 1 դպրոցում հանդիպում անցկացնելու թույլտվության պատճենը, որին ի պատասխան ներկայացվել է, որ Վ. Դալլաքյանը թիվ 1 դպրոցում հանդիպում է անցկացրել որպես տվյալ դպրոցի շրջանավարտ:

- ✓ Պատգամավորության թեկնածու Աշոտ Մանուկյանի նախընտրական շտաբի պետը դիմել է ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ անվճար դահլիճների ցանկը ստանալու նպատակով: Վերջիններս հայտնել են, որ անհրաժեշտ է դիմել Վանաձորի քաղաքապետարան: Վանաձորի քաղաքապետարանում պատասխանել են, որ անվճար դահլիճների ցանկ գոյություն չունի, եթե վերջինս ցանկանում է, կարող է վարձակալել: Մինչդեռ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2011 թ. հուլիսի 29-ի թիվ 38-Ն որոշումը սահմանում է նախընտրական միջոցառումներ անցկացնելու համար դահլիճներ տրամադրելու կարգը, համաձայն որի՝ կազմվել և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել Լոռու մարզի տարածքում անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների և շինությունների ցանկը (140 դահլիճ /շինություն) *(տե՛ս հավելված 8):*
- ✓ Կազմակերպության կողմից իրականացված երկարաժամկետ դիտորդության ընթացքում միայն Վահագն Մարտիրոսյանն է հայտնել, որ շտաբ բացելիս ՀԱԿ-ը խնդիրներ է ունեցել: Նա տեղեկացրել է, որ կոնկրետ Վանաձոր քաղաքում շտաբի տարածքներից մեկի վարձատուն հրաժարվել է տարածք տրամադրել ՀԱԿ-ին՝ խախտելով նախօրոք ունեցած պայմանավորվածությունը: Այս խնդրին, թեկնածուի հավաստմամբ, դաշինքը բախվել է նաև այլ քաղաքներում և գյուղերում: Պատգամավորության թեկնածու Վահագն Մարտիրոսյանի կարծիքով պատճառը վախն է եղել:
- ✓ Պատգամավորության թեկնածու Արկադի Համբարձումյանի ընտրողների հետ հանդիպումների ժամանակ ելույթներ են ունեցել և թեկնածուին ու ՀՀԿ-ին ընտրելու կոչ են արել դպրոցների տնօրեններ և ուսուցիչներ (օրինակ՝ թիվ 7, 30, 28 և 12 դպրոցների տնօրենները): Հանդիպումների ժամանակ դպրոցի տնօրենների և ուսուցիչների կողմից հիմնականում ներկայացվել են թեկնածուի կողմից իրականացված բարեգործությունները, մասնավորապես՝ էքսկուրսիաները և մարտի 8-ի նվերները: Մինչդեռ ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 6-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև պետական և համայնքային ծառայողներին, ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի աշխատողներին՝ իրենց լիազորություններն իրականացնելիս:
- ✓ Կազմակերպության դիտորդի ներկայությամբ թիվ 9 դպրոցի ուսուցիչը ցուցում է տվել աշակերտներից մեկին, որպեսզի վերջինս պարտադիր ներկա գտնվի 27.04.2012 թ. Վանաձորի Հայքի հրապարակում կայանալիք ՀՀԿ-ի հանդիպմանը: Նա նշել է, որ այդ աշակերտը այն 15 աշակերտներից մեկն է, ում ներկայությունը պարտադիր է, և իրենք «ներկա-բացակա են անելու»:

- ✓ ՀՀ նախընտրական շտաբերից մեկը տեղակայված է եղել Վանաձորի թիվ 16-րդ միջնակարգ դպրոցում, մինչդեռ ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ ընտրական շտաբերը չեն կարող տեղակայվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գրադեցրած շենքերում:

5. Նախընտրական քարոզչության ընթացքում կուսակցությունների և թեկնածուների կողմից իրականացված բարեգործություն

ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ «Նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին, կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ: Այն բարեգործական կազմակերպությունները, որոնց անվանումները կարող են նմանեցվել (ասոցացվել) կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների անվանումներին, թեկնածուների անուններին, նախընտրական քարոզչության ժամանակ բարեգործություն չեն կարող իրականացնել այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ, որոնց մասնակցում են այդ թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները կամ նրանց առաջադրած թեկնածուները»:

Այնուամենայնիվ նախընտրական քարոզչության ընթացքում արձանագրվել են կեղծ բարեգործության բազմաթիվ դեպքեր, որոնք չեն հերքվել կուսակցությունների կողմից, մասնավորապես՝

- ✓ ԲՀԿ, ՀՅԴ, ՀՀԿ և ՕԵԿ կուսակցությունների նախընտրական շտաբերից հայտնել են, որ քաղաքացիներն իրենց հիմնականում դիմում են սոցիալական հարցերով, մասնավորապես՝ գումարներ են խնդրում, ուսման վճարներ, տանիքի վերանորոգման, բակային խնդիրների լուծման համար, աշխատանքի տեղավորման, դեղորայքի տրամադրման և այլ բազմաթիվ խնդիրներով:
- ✓ ՀՅԴ շտաբի ղեկավարը քաղաքացիների դիմումների կապակցությամբ նշել է, որ աշխատանքի տեղավորման հարցով դիմած քաղաքացիների խնդիրների կապակցությամբ դիմել են համապատասխան մարդկանց օգնության, իսկ դեղորայք ստանալու խնդրանքով դիմողներից պահանջել են դեղատոմսեր, որպեսզի «ինչով հնարավոր լինի, օգնեն»:
- ✓ ԲՀԿ շտաբում հայտնել են, որ ամռանը կուսակցության աջակցությամբ անվճար բուժօգնություն է տրամադրվելու քաղաքացիներին:
- ✓ ՀՀԿ շտաբում քաղաքացիների դիմումների հետ կապված հայտնել են, որ շտաբը գրանցում է բոլոր քաղաքացիներին, որպեսզի հետագայում հնարավորության դեպքում («եթե մեծ գումարների հետ կապված հարցեր չլինեն») օգնեն: Նշվել է նաև, որ կուսակցության կողմից ներկայումս անվճար բժշկական օգնություն է տրամադրվում քաղաքացիներին՝ Երևանից հրավիրված բժիշկների կողմից:
- ✓ ՀՀԿ շտաբերից մեկի ղեկավարը նշել է. «Եթե քաղաքացիները շտաբ չեն այցելում, մենք ենք գնում՝ տեսնելու՝ հո հիվանդ չեն կամ ինչ-որ բան չի եղել, որ «չեն երևում»:

- ✓ ՀՀԿ շտաբի ղեկավարներից մեկը դիտորդների հետ զրույցի ժամանակ նշել է, որ քվեարկության օրը շտաբը մեքենաներ կտրամադրի՝ քաղաքացիներին ընտրատեղամաս փոխադրելու համար: Նաև նշել է, որ մեքենաներ կտրամադրվեն այն ընտրողներին /ուսանողներ և այլն/, ովքեր քվեարկությանը մասնակցելու նպատակով Երևանից Վանաձոր գալու հնարավորություն չեն ունենա:
- ✓ Այն հարցին, թե ինչպես են լուծում տրվում քաղաքացիների դիմումներին, Օրինաց Երկիր կուսակցության շտաբի ղեկավարը պատասխանել է, որ կուսակցությունը քաղաքացիներին օգնում է միայն օրենքի սահմաններում:
- ✓ Պատգամավորության թեկնածու Արկադի Համբարձումյանը ընտրողների հետ հանդիպման ժամանակ բնակիչների կողմից բարձրացված խնդիրների վերաբերյալ ընտրողներին հայտարարել է, որ եթե բոլորը ընտրեն ՀՀԿ-ին, ինքը համայնքի ղեկավարի հետ կխոսի ու քաղաքացիների կողմից բարձրացված հարցին լուծում կտրվի:

Իսկ պատգամավորության թեկնածու Աշոտ Մանուկյանը նշել է, որ իր նախընտրական շտաբ քաղաքացիները որևէ հարցով չեն դիմել, որովհետև գիտեն, որ «մյուս կուսակցությունների նման հարուստ չեն և տալու բան չունեն», ուստի եկել են՝ իրենց աջակցությունն առաջարկելու: Հայաստանի կոմունիստական կուսակցության շտաբից նույնպես հայտնել են, որ քաղաքացիներն իրենց դիմել են, հիմնականում, իրենց աջակցությունը առաջարկելու նպատակով: Միավորված հայեր կուսակցության շտաբից հայտնել են, որ քաղաքացիներն իրենց հիմնականում դիմել են անվճար իրավաբանական խորհրդատվություն ստանալու նպատակով, ինչպես նաև առաջարկել են իրենց աջակցությունը:

6. Դիտորդական առաքելության իրականացման խոչընդոտներ

Դիտորդական առաքելություն իրականացնելիս դիտորդների համար հիմնական խոչընդոտ է հանդիսացել թեկնածուների և կուսակցությունների նախընտրական շտաբերի գտնվելու վայրի մասին տեղեկատվության բացակայությունը կամ համապատասխան կենտրոնական շտաբի կողմից սույն տեղեկատվության չտրամադրելը, թեկնածուի կամ կուսակցության ընտրողների հետ հանդիպումների ժամանակացույցի չտրամադրելը կամ դրա բացակայությունը: Առանձնակի դժվարություններ են արձանագրվել ՀՀԿ և ԲՀԿ կուսակցությունների դիտարկման ընթացքում.

- ✓ պատգամավորության թեկնածու Վ. Դավլաթյանը հրաժարվել է պատասխանել կազմակերպության դիտորդի հարցերին և պահանջել է, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակից իրեն այլևս չանհանգստացնեն
- ✓ կազմակերպության դիտորդին թույլ չի տրվել մասնակցել պատգամավորության թեկնածու Վ. Դավլաթյանի թիվ 1 դպրոցի ուսուցիչների հետ փակ հանդիպմանը
- ✓ ԲՀԿ նախընտրական շտաբերում աշխատակիցները հրաժարվել են պատասխանել կազմակերպության դիտորդների հարցերին՝ պատճառաբանելով, որ իրենք դեմ են կազմակերպության գործունեությանը: Ավելին, շտաբի աշխատակիցներից մեկը սպառնացել է և ասել. «Եթե մենք իշխանության գանք, առաջին գործը կլինի Արթուր Սաքունցին (ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավար) Վանաձորից վտարելը»:

7. Նախընտրական քարոզչության ընթացքի վերաբերյալ քաղաքացիների կողմից կազմակերպությանը հայտնած տվյալներ և մտահոգություններ

Նախընտրական քարոզչության ընթացքում կազմակերպությունը մի շարք ահազանգեր է ստացել՝ կապված թեկնածուների կողմից տարբեր խախտումների հետ, որոնք վերաբերել են կեղծ/քողարկված բարեգործության դեպքերին, ընտրակաշառքներին (հատկանշական է, որ ահազանգերը եղել են ոչ թե ընտրակաշառքի անօրինականության, այլ ընտրակաշառք բաժանողների «խտրական» վերաբերմունքի շարժառիթով) և բյուջետային հիմնարկների աշխատակիցներին տարբեր նախընտրական/քարոզչական միջոցառումներում հարկադիր ներգրավելու վերաբերյալ՝

- ✓ Օրինաց երկիր կուսակցությունը Գյումրիում ալեհավաքներ է բաժանել ընտրողներին
- ✓ Արկադի Համբարձումյանի հովանավորությամբ Լեոնապատ գյուղի ուսանողները 29.04.2012 թ.՝ ժամը 08:30-ին, մեկնել են էքսկուրսիա:
- ✓ ՀՀԿ-ն խոստացել է Հալլավար գյուղի ընտրողներին 5000-ական դրամ տալ, բացառությամբ պետական ոլորտի աշխատակիցներին՝ պատճառաբանելով, որ նրանք աշխատավարձ են ստանում:
- ✓ մարզպետարանի աշխատակիցներին 27.04.2012 թ. ժամը 14:00-ից տուն են ուղարկել՝ ասելով, որ յուրաքանչյուրն ապահովի առնվազն 10 ձայն՝ ՀՀԿ-ի օգտին: Նույն օրը՝ ժամը 16:00-ին, Լոռու մարզպետը բոլոր համայնքային աշխատակիցներին հրավիրել է «Լոռի» ռեստորան՝ պահանջելով, որ վերջիններս ներկայանան որոշակի քանակությամբ անձնագրերով: Աշխատակիցները նշված օրը ներկայացել են անձնագրերով, որտեղ էլ մարզպետը յուրաքանչյուրից հարցրել է. «Քանի՞ ձայն ես բերել», իսկ ձայն տանել նշանակում է մարզպետին ներկայացնել անձանց անձնագրային տվյալները:
- ✓ Վանաձորի բժշկական քոլեջում ծնողական ժողով է արվել, որտեղ քարոզել են քվեարկել ՀՀԿ-ի օգտին և ուսանողներից պահանջվել է, որ յուրաքանչյուրը առնվազն 4 ձայն ապահովի ՀՀԿ-ի օգտին, որի դիմաց տվյալ ուսանողի ուսման վարձից կուսակցությունը վճարել է 40.000-ական դրամ:
- ✓ պատգամավորության թեկնածու Արկադի Համբարձումյանը Վանաձոր քաղաքի թիվ 12 և 27 դպրոցների աշակերտներին աջակցել է, որպեսզի գնան էքսկուրսիա, ինչպես նաև գումար է հատկացրել ավարտական լուսանկարների համար:
- ✓ Արկադի Համբարձումյանը Վանաձորի թիվ 7 դպրոցին խոստացել է ընտրություններից հետո ավտոբուս նվիրել, մինչ այդ ավտոբուսը ցուցադրվել է դպրոցում:
- ✓ Արկադի Համբարձումյանը Լեոնապատ համայնքի բնակիչներին խոստացել է վերակառուցել դպրոցի խաղահրապարակի պարիսպը:
- ✓ Քաղաքացիները հայտնել են, որ Հայաստանի հանրապետական կուսակցության շտաբից բաժանելու են 15.000-ական դրամ, որից 10.000-ը ՀՀԿ-ին ընտրելու համար, 5000-ը՝ Արկադի Համբարձումյանին:
- ✓ Վանաձոր քաղաքի երաժշտական ուսումնարանում աշխատակիցներից հավաքվել են նրանց անձնագրերը:
- ✓ Անձնագրային տվյալներ են հավաքագրվել նաև տներում:
- ✓ Բարգավաճ Հայաստան կուսակցությունը շտաբի միջոցով բժշկական օգնություն է առաջարկել՝ կուսակցությանը ընտրելու դիմաց:

- ✓ Բարգավաճ Հայաստան կուսակցությունը տրակտորներ է բաժանել գյուղական բնակավայրերում:
- ✓ Պետական համակարգի աշխատողներից հավաքագրվել են նրանց և նրանց ընտանիքի անդամների անձնագրային տվյալները:
- ✓ Ստացվել է ահազանգ այն մասին, որ Վանաձորի Դիմաց թաղամասում ընտրակաշառք է բաժանվում: Քաղաքացին բողոքել է ՀՀԿ շտաբի կողմից ցուցաբերված «կողմնակալ վերաբերմունքից», քանի որ շենքի ոչ բոլոր բնակիչներին է գումար տրվել:

VI. Երկարաժամկետ դիտորդության ընթացքում արձանագրված խախտումների վերաբերյալ գործողություններ

2012 թ. ապրիլի 6-ին կազմակերպության կողմից տեղեկատվության հարցումներ են ուղարկվել Լոռու մարզպետարան, Վանաձորի քաղաքապետարան՝ ստանալու 2012 թ. ապրիլի 8-ից մինչև մայիսի 6-ն արձակուրդում գտնվող աշխատակիցների թիվը և անուն, ազգանունները: 2012 թ. ապրիլի 12-ին Լոռու մարզպետարանից և 2012 թ. ապրիլի 16-ին քաղաքապետարանից կազմակերպության հարցմանն ի պատասխան ներկայացվել են արձակուրդում գտնվող անձանց տվյալները *(տե՛ս հավելված 9, 10):*

2012 թ. ապրիլի 6-ին կազմակերպության կողմից տեղեկատվության հարցում է կատարվել սոցիալական ծառայության Վանաձորի տարածքային բաժին՝ ստանալու տեղեկատվություն 2012 թ. հունվարից մինչև մայիսն ընկած ժամանակահատվածում Վանաձոր քաղաքի պետական նպաստ ստացող ընտանիքների թիվն՝ ըստ ամիսների: 2012 թ. ապրիլի 14-ին սոցիալական ծառայության Վանաձորի տարածքային բաժնից ստացվել է կազմակերպության պահանջած տեղեկատվությունը: Համաձայն ստացված պատասխանի՝ Վանաձոր քաղաքում նպաստ ստացողների թիվը 2012 թ. հունվար ամսին կազմել է 4645 ընտանիք, փետրվարին՝ 5058, մարտին՝ 5115 ընտանիք, ապրիլ և մայիս ամիսների ընտանեկան նպաստների ցուցակները դեռևս ձևավորված չեն եղել, ըստ այդմ նպաստառու ընտանիքների թիվը հայտնի չի եղել *(տե՛ս հավելված 11):*

2012 թ. ապրիլի 6-ին կազմակերպության կողմից տեղեկատվության հարցում է ուղարկվել Վանաձորի զբաղվածության տարածքային կենտրոն (ՉՏԿ) ստանալու տեղեկատվություն 2012 թ. հունվարից մայիսն ընկած ժամանակահատվածում ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի զբաղվածության կենտրոնում գրանցված գործազուրկների ընդհանուր թիվը: Միաժամանակ կազմակերպությունը խնդրել է տեղեկատվություն տրամադրել այն մասին, թե նույն ժամանակահատվածում ՉՏԿ-ում գրանցված անձանցից քանիսն են տեղավորվել աշխատանքի և որտեղ: 2012 թ. ապրիլի 12-ին Վանաձորի զբաղվածության տարածքային կենտրոնից ստացվել է կազմակերպության պահանջած տեղեկատվությունը: Համաձայն պատասխան գրության՝ գրանցվել են 701 գործազուրկներ, (հունվար-133, փետրվար-250, մարտ-266, ապրիլ-52), աշխատանքի են տեղավորվել 113-ը (հունվար-27, փետրվար-34, մարտ-36, ապրիլ-16): Աշխատանքի են տեղավորվել «Գլորիա», «Բագում», «Դավ Գար», «Սարտոն», կարի ֆարրիկաներում, «Ավտոգեն-Ս» ՍՊԸ-ում, «Էրեբունի Ալկո» ՍՊԸ-ում, «ՎՏԲ Հայաստան» բանկում, «Օազիս Ավտոմատիկա» ՍՊԸ-ում, ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, «Անահիտ» տաքսի սերվիսում և այլն *(տե՛ս հավելված 12):*

2012 թ. ապրիլի 10-ին կազմակերպության կողմից տեղեկատվության հարցում է կատարվել ԱՎԾ Լոռու մարզային գործակալություն՝ ստանալու 2001 թ. մինչև 2012 թ. մարտի 30-ը Վանաձոր քաղաքի բնակչության ընդհանուր թիվն ըստ տարիների: 2012 թ. ապրիլի 13-ին ԱՎԾ Լոռու մարզային գործակալությունից ստացվել է կազմակերպության պահանջած

տեղեկատվությունը, ըստ որի 2001 թ. հունվարի 1-ի դրությամբ Վանաձոր քաղաքի բնակչությունը եղել է 171.6 հազար, իսկ 2011 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 104.9 հազար *(տե՛ս հավելված 13)*:

2012 թ. ապրիլի 11-ին կազմակերպության կողմից տեղեկատվության հարցում է կատարվել Վանաձոր համայնքի ղեկավարին՝ պարզելու, թե Վանաձոր քաղաքի որ հատվածներում է թույլատրվում փակցնել քարոզչական պաստառներ և ինչ կարգով, եթե քարոզչական պաստառներ կան փակցված լիազոր մարմնի կողմից չսահմանված վայրերում, ապա ինչ միջոցառումներ են ձեռնարկվում խախտումները վերացնելու ուղղությամբ, անվճար վայրերից բացի կան արդյոք սահմանված վճարովի տարածքներ քարոզչական պաստառներ փակցնելու համար, եթե այո, ապա որքան են կազմում վճարները: 2012 թ. ապրիլի 17-ին կազմակերպության հարցման վերաբերյալ Վանաձորի քաղաքապետարանից ստացվել է պատասխան, որի համաձայն՝ թեկնածուների և կուսակցությունների քարոզչական պաստառներ փակցնելու համար Վանաձորի քաղաքային համայնքի տարածքում առանձնացվել են անվճար տեղեր (որոշումը www.vanadzor.am կայքէջում): Չնախատեսված վայրերում փակցված քարոզչական պաստառները վերացնում է համայնքի ղեկավարը, անհրաժեշտության դեպքում՝ ոստիկանության աջակցությամբ: Համայնքը վճարովի հիմունքներով տեղեր չի սահմանել: Վանաձոր համայնքում արտաքին գովազդային վահանակների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է ԿՀՀ-ին՝ ՀՀ Ազգային ժողովի 2012 թ. մայիսի 6-ին կայանալիք ընտրություններին մասնակցող թեկնածուների և կուսակցությունների քարոզչական պաստառներ փակցնելու ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ ապահովելու նպատակով *(տե՛ս հավելված 14)*:

2012 թ. ապրիլի 18-ին կազմակերպության կողմից տեղեկատվության հարցում է ուղարկվել ՀՀ ճանապարհային ոստիկանության երկրորդ սպայական գումարտակի հինգերորդ սպայական վաշտ՝ ստանալու տեղեկատվություն այն մասին, թե արդյո՞ք հասարակական տրանսպորտի վրա կամ ներսում թույլատրվում է փակցնել քարոզչական պաստառներ, եթե չի թույլատրվում, ապա ինչ պատասխանատվություն է նախատեսվում դրանք փակցնելու համար, քանի նման խախտում է արձանագրվել 2012 թվականի ապրիլի 8-ից մինչև ապրիլի 17-ն ընկած ժամանակահատվածում:

2012 թ. մայիսի 2-ին ՀՀ ճանապարհային ոստիկանության երկրորդ սպայական գումարտակի հինգերորդ սպայական վաշտից ստացվել է պատասխան գրություն, ըստ որի՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի համաձայն՝ հասարակական տրանսպորտի վրա կամ ներսում չի թույլատրվում փակցնել քարոզչական պաստառներ: ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 40¹ հոդվածի համաձայն՝ նախընտրական քարոզչություն կատարելու սահմանված կարգը խախտելն առաջացնում է տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի երկու հարյուրից մինչև հինգ հարյուրապատիկի չափով: Մ/թ ապրիլի 8-ից մինչև 18-ն ընկած ժամանակահատվածում գրության մեջ նշված խախտումներ չեն հայտնաբերվել *(տե՛ս հավելված 15)*:

2012 թ. ապրիլի 28-ին կազմակերպության կողմից տեղեկատվության հարցում է ուղարկվել «Լոռու մարզային հոգեկայարդարանական դիսպանսեր» ՓԲԸ՝ ստանալու տեղեկատվություն այն մասին թե քանի ընտրող կա Լոռու մարզային հոգեկայարդարանական դիսպանսերում: 2012 թ. մայիսի 3-ին Լոռու մարզի հոգեկայարդարանական դիսպանսերի կողմից տրամադրվել է կազմակերպության կողմից պահանջված տեղեկատվությունը, ըստ որի Լոռու

մարզային հոգեյարդարանական դիսպանսերի հիվանդանոցային բաժանմունքում 03.05.2012 թ. դրությամբ կա 2012 թ. ՀՀ ԱԺ ընտրություններին մասնակցող 15 հիվանդ (*տե՛ս հավելված 16*):

2012 թ. ապրիլի 25-ին կազմակերպության կողմից ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով գրություն է ուղարկվել Վանաձոր և Սպիտակ քաղաքներում օրենքով արգելված վայրերում նախընտրական քարոզչության պաստառներ փակցված լինելու մասին: Դիմումում նշվել է, որ այն հանդիսանում է ՀՀ ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի խախտում, որպես ապացույց՝ կցվել են նաև լուսանկարներ: ՀՀ ԿԸՀ-ն 2012 թ. ապրիլի 30-ին (թիվ N215-Ա) որոշում է կայացրել՝ «դիմել Վանաձոր և Սպիտակ քաղաքային համայնքների ղեկավարներին՝ ուսումնասիրելու հասարակական սննդի, առևտրի օբյեկտների և հասարակական տրանսպորտի վրա կամ ներսում (անկախ սեփականության ձևից) կուսակցությունների, ինչպես նաև ՀՀ ԱԺ մեծամասնական ընտրակարգով թեկնածուների քարոզչական պաստառներ փակցված լինելու հանգամանքը և նշված վայրերում փակցված քարոզչական պաստառներ հայտնաբերելու դեպքում՝ դրանք սահմանված կարգով անհապաղ վերացնել» (*տե՛ս հավելված 17*):

2012 թ. մայիսի 23-ին կազմակերպության կողմից տեղեկատվություն ստանալու հարցում է ուղարկվել Վանաձոր և Սպիտակ քաղաքների քաղաքապետարաններ, ստանալու տեղեկատվություն այն մասին, թե որ թեկնածուների և կուսակցությունների քարոզչական պաստառներն են փակցված եղել օրենքով չթույլատրվող վայրերում, տվյալ թեկնածուներն ու կուսակցությունները վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենքի 40.¹ հոդվածի կարգով ենթարկվել են պատասխանատվության, թե ոչ, եթե այո, ապա տրամադրել վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումների պատճենները, իսկ եթե որոշումներ չեն կայացվել, ապա ինչ պատճառով:

Գրությունների վերաբերյալ Վանաձորի քաղաքապետարանից ստացվել է պատասխան այն մասին, որ ստուգայցերի ժամանակ չի փաստագրվել, թե որ կուսակցության կամ թեկնածուի քարոզչական պաստառներն են փակցված եղել առևտրի որոշ օբյեկտների ցուցափեղկերին և ոչ ոք չի ենթարկվել վարչական պատասխանատվության, որովհետև անկախ այն հանգամանքից, թե որ կուսակցության կամ թեկնածուի քարոզչական պաստառ է փակցված եղել, առաջին իսկ զգուշացման դեպքում նշված քարոզչական պաստառներն անմիջապես հանվել են (*տե՛ս հավելված 18*):

Սպիտակի քաղաքապետարանից ստացված պատասխանով հայտնել են, որ առևտրի օբյեկտների վրա փակցված են եղել պատգամավորության թեկնածու Արկադի Համբարձումյանի քարոզչական պաստառները, որոնք փակցված են եղել հենց սեփականատերերի կողմից՝ առանց թեկնածուի հետ համաձայնեցման (*տե՛ս հավելված 19*):

Դեռևս 2012 թ. մարտի 27-ին ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանը անձնակազմին ցուցում է տվել օրենքի շրջանակներում գործել այնպես, որ խորհրդարանական ընտրություններն անցնեն «աննախադեպ մակարդակով»: Ինչին ի պատասխան ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 2012 մարտի 29-ին հայտարարություն է տարածել, որում կոչ է արել ՀՀ ոստիկանությանը՝ իրականացնել «Ընտրակաշառք» օպերացիա՝ իրապես բացահայտելու ընտրակաշառքի դեպքերը և արդյունքները պարբերաբար ներկայացնել հանրությանը՝

ամենշաբաթյա հաշվետվությունների տեսքով:² 2012 թ. մարտի 30-ին ՀՀ ոստիկանապետը հանդես է եկել կոչով, որում հորդորել է ԱԺ ընտրություններին նախորդող շրջանում և հատկապես ընտրությունների օրը խիստ ու հետևողական լինել ցանկացած իրավախախտի հանդեպ և օրենքով վերապահված լիազորությունների շրջանակում կանխել ընտրական գործընթացի խոչընդոտման յուրաքանչյուր փորձ: ՀՀ ոստիկանապետը նաև կոչ է արել բոլոր կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, քաղաքացիական շարժումներին, բոլոր քաղաքացիներին՝ ընտրական գործընթացներին վերաբերող ցանկացած իրավախախտում, այդ թվում՝ ընտրակաշառք արձանագրելու դեպքում անհապաղ ահազանգել ոստիկանություն:³ «2012 թ. մայիսի 6-ին կայանալիք Ազգային ժողովի ընտրությունների ընթացքում պատշաճ հասարակական կարգուկանոն հաստատելու, ընտրությունների քննարկման ընթացքն ապահովելու նպատակով» ՀՀ ոստիկանությունում ստեղծվեց նաև օպերատիվ շտաբ, իսկ ընտրախախտումների վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման եւ քննարկման նկատմամբ դատախազական հսկողություն իրականացնելու համար ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ստեղծվեց աշխատանքային խումբ: Այնուամենայնիվ ընտրակաշառքների վերաբերյալ գրանցվեցին բազմաթիվ ահազանգեր, որոնց ուղղությամբ պատշաճ և հրատապ քննություն այդպես էլ չիրականացվեց:

Ընտրակաշառքների վերաբերյալ ստացված բոլոր ահազանգերի դեպքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդները այցելել են նշված վայր, որոշ դեպքերում հնարավոր է եղել տեսագրել կամ լուսանկարել քաղաքացիների կազմակերպված, ակտիվ հոսքը նախընտրական շտաբեր:

- ✓ 2012 թ. մայիսի 4-ին ահազանգ է ստացվել, որ Վանաձոր քաղաքի Ներսիսյան նրբանցքում անջատվել է փողոցային լուսավորությունը, և տվյալ տարածքի ՀՀԿ շտաբում գումար է բաժանվել: Մինչև կազմակերպության աշխատակցի ժամանելը շտաբում այլևս ոչ ոք չի եղել, թեև փողոցային լուսավորությունը դեռևս անջատված է եղել:
- ✓ 2012 թ. մայիսի 5-ին Վանաձոր քաղաքի Տարոն 2 թաղամասում գտնվող ՀՀԿ շտաբի առջև արձանագրվել է անձնագրերով և դրամապանակներով քաղաքացիների հերթ և ակտիվ ելումուտ: Կազմակերպության աշխատակիցները նկարահանել են քաղաքացիների կուտակում և ակտիվ ելումուտ շտաբի տարածքում:
- ✓ Ի դեպ, ՀՀԿ մեկ այլ նախընտրական շտաբ գտնվել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողքին: 2012 թ. մայիսի 5-ին երկու քաղաքացի անձնագրերով մտել են ՀՔԱ Վանաձորի գրասենյակ և հարցրել, թե արդյոք այն ՀՀԿ շտաբն է, կազմակերպության աշխատակցի այն հարցին, թե արդյոք նրանք ընտրակաշառքի են եկել, քաղաքացիները դրական են պատասխանել: Ի դեպ նույն շտաբում ակտիվ ելումուտ է նկատվել 2012 թ. մայիսի 4-ի երեկոյան, թեև լույսերը հանգած են եղել:
- ✓ 2012 թ. մայիսի 5-ին՝ երեկոյան ժամը 20:10-ից 20:20-ի սահմաններում, ահազանգ է ստացվել, որ Վանաձոր քաղաքի Մյասնիկյան 42 հասցեում տեղակայված՝ Հայաստանի Հանրապետական Կուսակցության նախընտրական շտաբում ընտրակաշառք է

² <http://hcav.am/events/կոչ-հհ-ոստիկանությանը>

³ <http://hcav.am/events/հհ-ոստիկանության-կոչը>

բաժանվում: Կազմակերպության աշխատակիցները գնացել են վերը նշված հասցեում տեղակայված ՀՀԿ նախընտրական շտաբ:

Նշված դեպքերից վերջինի առնչությամբ կազմակերպությունն ահազանգել է ոստիկանություն, սակայն ոստիկանության կողմից տվյալ պահին քայլեր չեն ձեռնարկվել՝ այսինքն, ահազանգից հետո մոտ 1 ժամ 20 րոպե կազմակերպության աշխատակիցները եղել են վերը նշված վայրում, սակայն ոստիկանության ոչ մի աշխատակից չի եկել: Հաղորդման վերաբերյալ ընտրություններից հետո՝ միայն 2012 թ. մայիսի 13-ին, հարցաքննվել է կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցը: 2012 թ. մայիսի 14-ին կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

2012 թ. մայիսի 19-ին կազմակերպության կողմից վերը նշված որոշումը վերադասության կարգով բողոքարկվել է ՀՀ գլխավոր և Լոռու մարզի դատախազություններին՝ հիմքում դրվել է այն հանգամանքը, որ որոշումը կայացվել է քրեադատավարական նորմերի խախտումով՝ այսինքն վարույթն իրականացնող մարմնի կողմից կատարվել է ոչ պատշաճ քննություն՝ մարմնի կողմից չեն հարցաքննվել կազմակերպության այն ներկայացուցիչները, որոնք ահազանգից հետո մեկնել են վերը նշված հասցեում գտնվող ՀՀԿ նախընտրական շտաբ, ինչպես նաև նրանց դեպքի վայր տանող տաքսու վարորդը: Բողոքն ուղարկելուց հետո, առանց որոշում կայացնելու, քննիչը զանգահարել է կազմակերպության այն ներկայացուցիչներին և վարորդին, որոնք 2012 թ. մայիսի 5-ին գնացել են դեպքի վայր և հրավիրել է հարցաքննության: 2012 թ. հունիսի 1-ին կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում՝ հանցադեպի բացակայության հիմքով (*տե՛ս հավելված 20*):

VII. Քվեարկության օրը կազմակերպական և տեխնիկական բնույթի խախտումների վերաբերյալ դիտարկումներ

Կազմակերպական և տեխնիկական տեսանկյունից տեղամասերում դիտարկվել են մի շարք փաստեր, որոնք որոշակի ազդեցություն են ունեցել ընտրական գործընթացի և քվեարկության արդյունքների վրա:

Ընտրատեղամասի կահավորումը լավ է գնահատվել դիտարկված տեղամասերի միայն 50 %-ում, իսկ մյուս տեղամասերում համարվել է բավարար կամ անբավարար: Ընտրատեղամասերում տեղեկատվական նյութերը դիտարկված տեղամասերից 59-ում (95 %) առկա են եղել ըստ սահմանված կարգի: Դիտարկված տեղամասերի 30 %-ը բավարար չի եղել 50 հոգու միաժամանակյա գտնվելու համար, որն անհրաժեշտ է ընտրական հանձնաժողովի և քվեարկությանը ներկա լինելու իրավունք ունեցող անձանց միաժամանակյա կանոնավոր աշխատանքն ապահովելու համար:

Դիտարկված տեղամասերից մոտ 50 %-ում կույրերի համար նախատեսված կաղապարն առկա չի եղել: Իսկ նրանց 65 %-ը հասանելի չեն եղել հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Ընտրատեղամասի բացման հետ կապված բողոքներ չեն գրանցվել դիտարկված տեղամասերի 92 %-ում, և դիտարկված բոլոր դեպքերում ընտրատեղամասերը բացվել են սահմանված ժամին:


Ընտրացուցակների վերաբերյալ խնդիրներ արձանագրվել են դիտարկված տեղամասերից 29-ում (46 %), որից 1-ում ընտրողների մի մեծ զանգված չի կարողացել քվեարկել:

Դիտարկված տեղամասերում քվեարկության խցիկները հիմնականում տեղադրված են եղել ըստ օրենքով սահմանված կարգի (97 %), բացառությամբ այն դեպքերի, երբ քվեասենյակի չափի և ձևի պատճառով հնարավոր չի եղել հետևել սահմանված կարգին, այնուամենայնիվ դիտարկված տեղամասերից 1-ում քվեախցիկի դիրքի պատճառով քվեարկության գաղտնիությունը չի ապահովվել:

Թեև գրեթե բոլոր դիտարկված տեղամասերում անձնագրերի դրոշմակնքումն իրականացվել է ըստ սահմանված կարգի, այնուամենայնիվ քվեարկության օրը դրոշմակնքի թանաքի անհետացման վերաբերյալ ահազանգեր են ստացվել դիտարկված տեղամասերից 12-ից: Այս հանգամանքը մեծացրել է կրկնաքվեարկության հնարավորությունը:

Կազմակերպական և տեխնիկական խնդիրների վերաբերյալ կազմակերպության կողմից իրականացված դիտարկումներն ավելի մանրամասն ներկայացված են ստորև.

1. Ընտրատեղամասի կահավորումը և կազմակերպված լինելը




Ընտրատեղամասի կահավորումը լավ է գնահատվել դիտարկված տեղամասերից 31-ում (49 %) և բավարար՝ ևս 31 (49 %) դիտարկված տեղամասերում: Տեղամասերից մեկի կահավորումն ու կազմակերպված լինելն անբավարար է համարվել միայն 1 դեպքում:

Ընտրատեղամասերի կահավորման հետ կապված հիմնական դժգոհությունները վերաբերել են քվեախցիկների դիրքին, որոնց դիրքը ոչ միշտ է համապատասխանել օրենքի պահանջին: Տեղամասի կահավորմանը և կազմակերպմանն առնչվող դժգոհություն է առաջացել 35/39 տեղամասում, որտեղ ընտրողների ցուցակները դրսում չափազանց բարձր են փակցված եղել և ընտրողները բողոքել են, որ չեն կարող տեսնել իրենց անունները: Փաստը դիտորդի կողմից նույնպես հաստատվել է:


Երևան քաղաքի թիվ 7/35 տեղամասում արձանագրվել է, որ քվեարկության սենյակը բավարար լուսավորված չէ: Փաստի առնչությամբ գրություն է պատրաստվել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, սակայն դիտորդի միջամտությունից հետո տեխնիկական խնդիրը լուծվել է:

2. Ընտրատեղամասում անհրաժեշտ տեղեկատվության առկայությունը (քվեաթերթիկների նմուշները, քվեարկության նշանի ձևը փակցված է քվեախցիկի վրա)



Ընտրատեղամասերում տեղեկատվական նյութերը դիտարկված տեղամասերից 59-ում (95 %) առկա են եղել ըստ սահմանված կարգի: Երևան քաղաքի թիվ 7/18 ընտրատեղամասի քվեասենյակում բացակայել է քվեարկության նշանի նմուշը, իսկ թիվ 7/20 տեղամասում ընտրողների ցուցակը փակցված չի եղել:


3. Մոտ 50 հոգու տեղամասում միաժամանակ գտնվելու համար ընտրատեղամասի տարածքի բավարար լինելը



Դիտարկված տեղամասերից 19-ը (30 %) բավարար չեն եղել 50 հոգու միաժամանակյա գտնվելու համար, ինչն անհրաժեշտ է քվեարկության բնականոն ընթացք ապահովելու և ընտրատեղամասում գտնվելու իրավունք ունեցող անձանց ազատ գործունեությունն ապահովելու համար: Դիտարկված տեղամասերից 44-ի (70 %) տարածքը դիտորդների կողմից գնահատվել է բավարար: Իջևան քաղաքի թիվ 41/24 տեղամասում կազմակերպության դիտորդն ահազանգել է, որ ընտրատեղամասը փոքր է և չի կարող ընդունել


մինչև 50 մարդու: Տեղամաս են ժամանել ներկայացուցիչներ թիվ 41 ԸԸՀ-ից և արձանագրել, որ այդտեղ կարող են անցկացվել ընտրություններ:

4. Կույրերի համար համամասնական ընտրակարգով քվեարկության համար հատուկ կադապարի առկայությունը տեղամասում



Դիտարկված տեղամասերից 30-ում (48 %) կույրերի համար նախատեսված կադապարն առկա չի եղել: Հարկ է նշել, որ բազմաթիվ տեղամասերում ՏԸՀ անդամները ընդհանրապես տեղյակ չեն եղել, թե կադապարն իրենից ինչ է ներկայացնում: Թեև տեղեկացվել է, որ օրենքով սահմանված կարգով բոլոր տեղամասերին տրամադրվել է կույրերի համար նախատեսված կադապար, սակայն Վանաձոր քաղաքի թիվ 29/21 հանձնաժողովի նախագահը տեղեկացրել է դիտորդին, որ ԿԸՀ-ի կողմից նման կադապար չի ուղարկվել:


5. Ընտրատեղամասը մատչելիությունը սայլակով տեղաշարժվող հաշմանդամ անձի համար. թեքահարթակի առկայություն



Թեև ընտրատեղամասերը հիմնականում գտնվել են առաջին հարկում (դիտարկված 63 տեղամասերից միայն 8-ն են գտնվել երկրորդ հարկում), նրանց 65 %-ն այնուամենայնիվ հասանելի չի եղել հաշմանդամություն ունեցող անձանց համար: Գյումրիի թիվ 34/37 տեղամասում, թեև թեքահարթակը առկա է եղել, սակայն դռների

նեղության պատճառով, տեղամասն այնուամենայնիվ մատչելի չի եղել հաշմանդամների համար: Իջևանի թիվ 41/21 տեղամասը գտնվել է երկրորդ հարկում և դիտորդը տեղեկացել է, որ անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի անդամներից մեկն արկղն իջեցնելու էր ներքև՝ սայլակով տեղաշարժվող հաշմանդամների համար:


6. Տեղամասի բացման իրականացումն ըստ սահմանված կարգի



Տեղամասի բացման հետ կապված խնդիրներ արձանագրվել են միայն Երևանի թիվ 7/25 տեղամասում, որտեղ գրանցամատյանում դիտորդների և վստահված անձանց տվյալները սխալ են նշվել, սակայն շտկվել են տեղամասը բացելուց առաջ:

Երևան քաղաքի թիվ 7/08 տեղամասում համամասնական ընտրակարգի քվեաթերթիկների մեկ փաթեթ կնիքված չի եղել հանձնաժողովի երեք անդամների կողմից: Դիտարկված բոլոր դեպքերում ընտրատեղամասերը բացվել են սահմանված ժամին:

7. Բողոքներ՝ ընտրատեղամասի բացման հետ կապված




- Բողոքներ չեն եղել
- Եղել են հիմնավորված և էական բողոքներ
- Եղել են ոչ էական կամ չհիմնավորված բողոքներ

Ընտրատեղամասի բացման հետ կապված բողոքներ չեն գրանցվել դիտարկված տեղամասերից 58-ում (92 %), գրանցված մի քանի բողոքները եղել են տեխնիկական խնդիրների հետ կապված, որոնք այնուամենայնիվ չեն խոչընդոտել տեղամասերի ժամանակին բացվելուն:

Տեղամասային ընտրական հանձնաժողովը տեղամասային կենտրոնի բացումն անց է կացրել ըստ կարգի և պատշաճ ձևով:


8. Քվեարկության սենյակն ապահովում է ընտրական հանձնաժողովի և քվեարկությանը ներկա լինելու իրավունք ունեցող անձանց միաժամանակյա կանոնավոր աշխատանքը



- այո
- ոչ

Դիտարկված տեղամասերից միայն 4-ում (4 %)՝ Երևան քաղաքի 7/02, 7/10, 7/20 և Վանաձոր քաղաքի 30/31 տեղամասում են դիտորդներն արձանագրել, որ քվեասենյակը բավարար չէ ընտրական հանձնաժողովի և քվեարկությանը ներկա լինելու իրավունք ունեցող անձանց միաժամանակյա կանոնավոր աշխատանքն ապահովելու համար:

9. Ընտրացուցակների հետ կապված խնդիրներ/անճշտություններ




- Ընտրողների մի մեծ զանգված չեն կարողացել քվեարկել անճշտությունների պատճառով
- Ընտրողների ցուցակների հետ կապված խնդիրներ չեն եղել
- Որոշ ընտրողների անուններ բացակայել են ցուցակներից

Ընտրացուցակների վերաբերյալ խնդիրներ արձանագրվել են դիտարկված տեղամասերից 29-ում, որից 1-ում ընտրողների մի մեծ զանգված չի կարողացել քվեարկել, իսկ 28-ում (44 %) որոշ ընտրողների անուններ բացակայել են ընտրացուցակներից: Երևան քաղաքի թիվ 7/16 տեղամասում քաղաքացին բողոքել է, որ չկա ընտրացուցակում և մեքենա է պահանջել, որպեսզի գնա դատարան՝ մեղադրելով, որ սիրում են մարդկանց «քաշքշել»: Հանձնաժողովի նախագահն առարկել է, թե անհրաժեշտ էր նախապես ստուգել ընտրացուցակները:

Վանաձորի թիվ 30/12 տեղամասում մի կին մինչև քվեարկելը բարձրաձայն հայտարարել է,

որ 2 տարի առաջ մահացած ամուսնու անունը առկա է ցուցակում: Երևան քաղաքի թիվ 7/06 տեղամասում ընտրացուցակում 135 համարի շենքի փոխարեն գրված է եղել 195:

10. Քվեարկության խցիկի դիրքի համապատասխանությունը օրենքի պահանջներին




- լիարժեք ապահովում է քվեարկության գաղտնիությունը
- մասամբ է ապահովում քվեարկության գաղտնիությունը

Դիտարկված տեղամասերում քվեարկության խցիկները հիմնականում տեղադրված են եղել ըստ օրենքով սահմանված կարգի (97 %), քվեախցիկի դիրքը չի ապահովել քվեարկության գաղտնիությունը դիտարկված տեղամասերից 1-ում: Որոշ դեպքերում քվեարկության սենյակի չափի պատճառով խցիկները տեղադրվել են որոշակի խախտումներով: Երևան քաղաքի թիվ 7/32 տեղամասում քվեախցիկը տեղադրված է եղել պատուհաններից մոտավորապես 1մ հեռավորության վրա:

Վանաձոր քաղաքի թիվ 30/32 տեղամասում քվեախցիկները տեղադրված չեն եղել դեմքով դեպի հանձնաժողովը: Վանաձորի թիվ 30/36 ընտրատեղամասում քվեախցիկները տեղադրված են եղել աստիճանների դիմաց: Երևան քաղաքի թիվ 7/16 տեղամասի 3 քվեախցիկներից մեկը տեղադրված է եղել պատուհանի մոտ: Իսկ Գյումրի քաղաքի թիվ 33/77 տեղամասում քվեախցիկներից մեկը տեղադրված է եղել քվեաթերթիկների տրամադրման սեղանի կողքին:

11. Ղրոշմակնիքի թանաքի անհետացման վերաբերյալ ահազանգեր




ՀՀ ընտրական օրենսգրքի 64-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Քվեարկության ծրարը կնքող և քվեատուփի համար պատասխանատու անդամը քվեարկության ծրարը կնքում և քվեարկության ծրարը քվեատուփի մեջ գցելու հնարավորություն է ընձեռում միայն ընտրողի անձը հաստատող փաստաթղթում տվյալ ընտրությանը մասնակցելու վերաբերյալ ղրոշմակնիքի բացակայությունը ստուգելուց և դրա բացակայության դեպքում անձը հաստատող փաստաթուղթը ղրոշմակնիքելուց հետո:

Եթե ընտրողի անձը հաստատող փաստաթղթում առկա է տվյալ ընտրությանը մասնակցելու մասին ղրոշմակնիք, ապա հանձնաժողովի անդամը հանձնաժողովի նախագահի միջոցով տեղեկացնում է հերթապահող ոստիկաններին հանցագործության փորձի մասին, հանում է քվեաթերթիկը քվեարկության ծրարից, ծրարը վերադարձնում քվեաթերթիկ և քվեարկության ծրար հատկացնող հանձնաժողովի անդամին, իսկ քվեաթերթիկին ամրացնելով քվեաթերթիկի ցանկացած մեկ ելունդ՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով անհապաղ մարում է»: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անձը հաստատող փաստաթղթի ղրոշմակնիքման համար տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացվում է այնպիսի նյութ, որն օգտագործելուց հետո առնվազն 12 ժամ պահպանվում է, իսկ հետո՝

անհետանում: Այսինքն կառավարության կողմից ներդրվել է մի այնպիսի մեխանիզմ, որպեսզի կանխվեն կրկնակի ընտրությունները:

Թեև տեղամասերում ստուգել են կնիքի առկայությունը և թույլատրել են ծրարը նետել քվեատուփի մեջ միայն դրոշմակնիքի բացակայության դեպքում, սակայն դիտորդների կողմից արձանագրվել է, որ անձնագիրը կնքող անդամները երբեմն չեն ստուգել անձի ինքնությունը մինչև անձնագիրը կնքելը, ինչը ինքին ռիսկային երևույթ է, քանի որ քվեարկության հենց սկզբից ահագանգ է եղել, որ դրոշմակնիքի թանաքն արագ անհետանում է, և այս դեպքում կրկնաքվեարկությունն առավել քան հավանական է եղել: Դրոշմակնիքի թանաքի անհետացման վերաբերյալ ահագանգեր են ստացվել դիտարկված տեղամասերից 12-ից (19%), մասնավորապես՝ Երևանի թիվ 7/16, 7/20, 7/25, 7/32, Վանաձորի թիվ 29/03, 30/07, 30/15, 30/26, 30/31, 30/37 և Իջևանի թիվ 41/26 և 41/28 տեղամասերից: ԿԸՀ հրահանգով տեղամասերում դրոշմակնիքի համար նախատեսված հատուկ թանաքը փոխարինվել է սովորական թանաքով: Այնուամենայնիվ անհայտ է, թե դրոշմակնիքի թանաքի անհետացումը որքանով է նպաստել կրկնակի քվեարկելուն և այլ չարաշահումների: Ուշագրավ է նաև, որ արձանագրվել են դեպքեր, երբ ընտրողները վերադարձել են և պահանջել, որ դրոշմակնիքը նորից դրվի, քանի որ կարող են խնդիրներ ունենալ աշխատավայրում:

12. Քվեաթերթիկը սխալ լրացնելու դեպքում ՏԸՀ գործողությունները




- մյուս քվեաթերթիկ է հատկացվել՝ առանց վնասված քվեաթերթիկն անհապաղ մարելու և ընտրողների ցուցակում նշում կատարելու
- մյուս քվեաթերթիկ է տրամադրվել՝ վնասված քվեաթերթիկն անհապաղ մարելով և ընտրողների ցուցակում նշում կատարելով
- քվեաթերթիկի սխալ լրացման մասին այտարարություններ չեն եղել

Քվեաթերթիկը սխալ լրացնելու դեպքերում հիմնականում ըստ կարգի տրամադրվել է նոր քվեաթերթիկ, հինը մարվել է ելունդի հետ և փաստն արձանագրվել է (49 %): Դիտարկված տեղամասերից 29-ում (46 %) քվեաթերթիկը սխալ լրացնելու դեպքեր չեն գրանցվել: Դիտարկված տեղամասերից 3-ում (5 %) սխալ լրացված քվեաթերթիկը չի մարվել ըստ սահմանված կարգի: Հարկ է նշել, որ Երևան քաղաքի թիվ 7/20 տեղամասի քվեախցիկներից մեկում հայտնաբերվել են խնամքով թաքցված քվեաթերթիկներ: Երևան քաղաքի թիվ 7/26 տեղամասում հայտնաբերվել է մեկ նշում չպարունակող համամասնական քվեաթերթիկ:

Իսկ Երևան քաղաքի թիվ 7/28 տեղամասի քվեախցիկներից մեկում հայտնաբերվել է 3 ընտրած և ծրարավորած քվեաթերթիկ: Հայտնաբերվելուց հետո քվեաթերթիկները մարվել են հանձնաժողովի նախագահի կողմից:

13. Ընտրատեղամասի տեսաձայնագրում



Հայտնի է, որ Բարգավաճ Հայաստան կուսակցությունը տեսախցիկներ է տեղադրել տեղամասերում՝ վերահսկելու քվեարկության ողջ ընթացքը: Կազմակերպության կողմից դիտարկված տեղամասերից 40-ում (63 %) իրականացվել է տեսաձայնագրում: Ի դեպ, Գյումրիի թիվ 34/37 տեղամասում երկու անձ (հավանաբար ԲՀԿ ներկայացուցիչներ) հանձնաժողովի անդամներից մեկին խնդրել են ուղղել տեսախցիկի դիրքը, քանի որ առցանց հետևում են գործընթացին

և սենյակի լույսը թույլ չի տալիս տեսնել, թե քվեասենյակում ինչ է կատարվում: ԲՀԿ ներկայացուցիչների հեռանալուց հետո տեսախցիկը չի ուղղվել: Երևան քաղաքի թիվ 7/23 տեղամասում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդը քվեախցիկի վերևում նկատել է տեսանկարող սարքի նմանվող սարք, սակայն հանձնաժողովի նախագահին ասել է, որ դա լուսավորության ապահովման ինչ որ համակարգ է: Պատասխանը դիտորդին չի համոզել, սակայն ստուգելու հնարավորություն չի ունեցել:

VIII. Տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքի վերաբերյալ դիտարկումներ

Համաձայն ՀՀ ընտ. օր 42-րդ հոդվածի 2-րդ մասի և 39-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամ նշանակում են՝

1) Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները՝ մեկական անդամ, եթե խմբակցությունների թիվը մեծ է 4-ից, և երկուական անդամ, եթե խմբակցությունների թիվը փոքր է հինգից:

2) համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝ երկու անդամ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել ընտրական իրավունք ունեցող այն քաղաքացիները, որոնք կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով անցել են ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ և ստացել որակավորման վկայականներ: Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների կողմից իրականացված վատ վարչարարության հիմքերից են հանձնաժողովի անդամների, այդ թվում նաև նախագահի տվյալ ոլորտը կարգավորող օրենսդրությանը չտիրապետելը, ինչպես նաև օրենսդրությունը իմանալու դեպքում այն չկիրառելը:

Դիտորդական առաքելության ընթացքում վատ վարչարարության հետևանքով կազմակերպության դիտորդները հանդիպել են մի շարք խոչընդոտների՝ մասնավորապես հանձնաժողովի նախագահի կողմից փորձ է արվել արգելել դիտորդական առաքելություն իրականացնել կամ մասնակցել քվեարկության արդյունքների ամփոփման նիստին: Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի 7/02 ընտրատեղամասում հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի նիստին չի թույլատրել մասնակցել ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդին՝ պատճառաբանելով, որ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից տրված ՀՀ ազգային ժողովի ընտրությունների տեղական դիտորդի վկայականի 1-ին կետում նշված է, որ դիտորդն իրավունք չունի ներկա լինելու ընտրական հանձնաժողովի նիստերին:

ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝

1. Դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչն իրավունք ունեն՝

1) ներկա լինելու ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում:

Իսկ Երևանի քաղաքի թիվ 7/20 ընտրատեղամասում հանձնաժողովի նախագահը հայտնել է, որ դիտորդը իրավունք չունի մասնակցել քվեարկության արդյունքների ամփոփման նիստին, սակայն դիտորդի կողմից օրենքի համապատասխան կետը նշելուց հետո թույլատրվել է նրա մասնակցությունը քվեարկության արդյունքների ամփոփմանը:

Մտահոգության տեղիք է տալիս նաև, որ շատ հաճախ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները և նախագահները հայտարարում են, որ իրենք պատասխանատու չեն ընտրատեղամասից դուրս կատարվող գործողությունների համար, այսինքն իրենք

պատասխանատվություն չեն վերցնում ընտրական գործընթացի ընդհանուր կազմակերպման համար, այլ դիտում են տեղամասը, որպես արտաքին ազդեցություններից մեկուսացած տարածք, առանց հաշվի առնելու, թե այդ արտաքին գործոնները որքանով են ազդում քվեարկության ընթացքի և արդյունքների օրինականության վրա:

Չարաշահումների, ընդհանուր կարգի խաթարման և կուտակումների տեղիք է տալիս նաև այն փաստը, որ հանձնաժողովի անդամները հիմնականում ներգրավվում են տվյալ համայնքից: Օրինակ՝ Երևան քաղաքի թիվ 7/35 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների կողմից քվեարկության ընթացքում պարբերաբար ուսումնասիրվել են ընտրողների ցուցակները և չքվեարկված անձանց վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրվել հեռախոսով՝ «բերման ենթարկելու» նպատակով, որից հետո նկատվել է ընտրողների ուղղորդված հոսք: Նման դեպքեր են նկատվել նաև այլ տեղամասերում:

Գյումրի քաղաքի 33/77 տեղամասում դիտորդն ականատես է եղել, թե ինչպես է երիտասարդը քվեատուփերի համար պատասխանատու հանձնաժողովի անդամի անուշադրության պատճառով ծրարը քվեատուփ գցում առանց կնքելու: Հասկանալով սխալը երիտասարդը սպասել է, որ նոր քվեաթերթիկ տրամադրեն, սակայն հանձնաժողովի անդամներն անուշադրության են մատնել նրան, իսկ նրա հեռանալուց հետո հանձնաժողովի անդամների գաղտնի կարճ խոսակցությունից դիտորդը հասկացել է, որ հանձնաժողովի անդամները տեղյակ են եղել երիտասարդի ընտրությունից, այդ պատճառով էլ նախընտրել են, որ ձայնն անվավեր համարվի:

Սվյալ համայնքից ներգրավված տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների կողմից երբեմն անփութություն կամ անհետևողականություն է ցուցաբերվում անձր հաստատող փաստաթղթերի ստուգման հարցում: Բացի այդ, հանձնաժողովի անդամները զրույցի են բռնվում արդեն քվեարկված ընտրողների հետ, որն առաջացնում է քվեարկության բնականոն ընթացքի խաթարում թե՛ պարտականությունների պատշաճ կատարման, թե՛ քվեասենյակում կողմնակի մարդկանց գտնվելու տեսանկյունից:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների գործառույթները 2 ժամը մեկ փոխվել են դիտարկված տեղամասերից 56-ում (89 %):

Դիտարկված տեղամասերից 7-ում (11 %) տեղամասային հանձնաժողովի անդամների գործառույթները չեն փոխվել 2 ժամ պարբերականությամբ՝ գոյացած հերթերի պատճառով:

Քվեարկության սենյակում քվեարկությունն ընթացել է ըստ կարգի դիտարկված տեղամասերից 24-ում (38 %): Քվեասենյակում հաճախակի 15-ից ավել ընտրողներ են գրանցվել դիտարկված տեղամասերից 11-ում (18 %): Քվեասենյակի մարդաշատության պատճառով դիտարկումն անհնար է եղել դիտարկված 2 տեղամասում (3 %): Դիտարկված տեղամասերից 26-ում (41 %) չնայած քվեարկության սենյակի մարդաշատությանը, տեղամասային ընտրական հանձնաժողովը տիրապետել է իրավիճակին:

Դիտարկված տեղամասերի տեղամասային հանձնաժողովի նախագահներն ու քարտուղարները հիմնականում տիրապետել են ընտրական օրենսգրքին (78 %): Հանձնաժողովի նախագահը և քատուղարը ուղեցույցից պարբերաբար օգտվել են դիտարկված

տեղամասերից 11-ում (19 %): Սակայն եղել են նաև տեղամասեր, որտեղ նախագահը կոմպետենտ չի եղել, ինչն ազդել է ընդհանուր գործընթացի, տեղամասի կարգապահության և այլ հարցերի վրա (3 %):

Դիտարկված տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից խախտումներն արձանագրվել են 24 տեղամասերում (47 %), մասամբ արձանագրվել են 14 տեղամասում (27 %), չեն արձանագրվել 9-ում (18 %): Խախտում չի արձանագրվել դիտարկված տեղամասերից 4-ում (8 %): Այնուամենայնիվ նտրատեղամասերում գրանցվել են բազմաթիվ բողոքներ ընտրական գործընթացի մասնակիցների կողմից, մասնավորապես՝ դիտարկված տեղամասերից 23-ում (51 %) բողոքներ գրանցվել են վստահված անձանց կողմից, որոնք առնչվել են այլ վստահված անձանց կողմից խախտումներին և չարաշահումներին, ինչպես նաև հանձնաժողովի անդամների կողմնակալ վերաբերմունքին: Ընտրողների կողմից հնչեցված բողոքներ գրանցվել են դիտարկված տեղամասերից 14-ում (31 %) և հիմնականում առնչվել են կուտակումներին, քվեարկության գործընթացի դանդաղ ընթացքին և հանձնաժողովի անարդյունավետ աշխատանքին: Դիտորդների կողմից բողոքներ գրանցվել են դիտարկված տեղամասերից 7-ում (16 %):

Դիտարկված տեղամասերից 5-ում (8 %) գրանցվել է խտրական վերաբերմունք վստահված անձանց նկատմամբ:


Դիտարկված տեղամասերից 41-ում (65 %) չլիազորված անձինք չեն եղել, 10 տեղամասում (16 %) եղել են անհայտ անձինք, 11 տեղամասում (11 %) եղել են ոստիկանության աշխատակիցներ և 1 տեղամասում եղել են ՏԻՄ անդամներ (2 %):

Դիտարկված տեղամասերից 22-ում (35 %) հանձնաժողովն ընդմիջել է մինչև քվեարկության արդյունքների հաշվարկը, իսկ 6 տեղամասում (9 %) հաշվարկն սկսվել է կարճատև ընդմիջումից հետո:

Չնայած տեղամասային ընտրական հանձնաժողովների վերաբերյալ բազմաթիվ դիտարկումներին՝ դիտորդները դիտարկված տեղամասերում տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատանքը հիմնականում լավ են գնահատել (76 %):

Քվեարկության նախապատրաստման փուլում, քվեարկության ընթացքում և քվեարկության արդյունքների ամփոփման փուլում ՏՀՀ-ների աշխատանքի դիտարկման արդյունքում մասնավորապես արձանագրվել է հետևյալը.

1. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների գործառույթների փոխվելը 2 ժամ պարբերականությամբ




Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների գործառույթները 2 ժամը մեկ փոխվել են դիտարկված տեղամասերից 56-ում (89 %): ՀՀ ընտրական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ քվեարկության օրը՝ ժամը 7:00-ին, տեղամասային ընտրական հանձնաժողովը

տեղամասային կենտրոնում կայացած նիստում վիճակահանությամբ որոշում է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների՝ 2 ժամը մեկ պարբերականությամբ գործառույթների հերթափոխը: Դիտորդական առաքելության փորձը ցույց է տվել, որ որոշ ընտրատեղամասային հանձնաժողովներ գործառույթների հերթափոխը որոշում են օրենքով սահմանված ժամը 7:00-ի նիստի ժամանակ, որոշներ էլ ուղղակի 2 ժամը մեկ գործառույթների հերթափոխը որոշում են տվյալ պահին վիճակահանություն իրականացնելու միջոցով: Եղել են դեպքեր, երբ հանձնաժողովի անդամները գործառույթները փոխել են առանց վիճակահանության, ուղղակի նախագահը անդամներին հրահանգել է, թե առաջիկա 2 ժամվա ընթացքում որ անդամը որ գործողությունն է իրականացնելու: Այսինքն, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ ընտրական օրենքը հստակ սահմանում է, թե գործառույթների հերթափոխի վիճակահանությունը երբ և ինչպես պետք է իրականացվի այնուամենայնիվ տեղամասային հանձնաժողովների կողմից օրենքը միատեսակ չի կիրառվում, որն էլ հանգեցնում է սահմանված կարգի խախտման:

Դիտարկված տեղամասերից 7-ում (11 %) տեղամասային հանձնաժողովի անդամների գործառույթները չեն փոխվել 2 ժամ պարբերականությամբ՝ գոյացած հերթերի պատճառով : Ի դեպ, դիտարկված տեղամասերից երեքում (Երևանի 7/14, 7/16 և Վանաձորի 30/22 տեղամասում) տեղամասային հանձնաժողովի անդամների թիվը եղել է 6՝ օրենքով սահմանված առնվազն 7-ի փոխարեն:

2. Կարգապահությունը ընտրատեղամասում



- Քվեարկության սենյակը մարդաշատ է, բայց ՏՀՀ-ն տիրապետում է իրավիճակին
- Քվեարկության սենյակը մարդաշատ է, դիտարկումն անհնարին է
- Քվեարկության սենյակում հաճախ 15-ից ավելի ընտրող կա
- Քվեարկության սենյակում քվեարկությունն ընթանում է ըստ կարգի

Քվեարկության սենյակում քվեարկությունն ընթացել է ըստ կարգի դիտարկված տեղամասերից 24-ում (38 %): Քվեասենյակում հաճախակի 15-ից ավել ընտրողներ են գրանցվել դիտարկված տեղամասերից 11-ում (18 %): Քվեասենյակի մարդաշատության պատճառով դիտարկումն անհնար է եղել դիտարկված 2 տեղամասում (3 %): Դիտարկված տեղամասերից 26-ում (41 %), չնայած քվեարկության սենյակի մարդաշատությանը, տեղամասային ընտրական հանձնաժողովը տիրապետել է իրավիճակին: ՀՀ ընտրական օրենսգրքի 63-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ քվեարկության սենյակում միաժամանակ չի կարող գտնվել 15-ից ավելի քվեարկող: Քվեարկության բնականոն ընթացքն ապահովելու համար ընտրական հանձնաժողովի նախագահն իրավունք ունի ընտրողներին քվեարկության սենյակ թողնելու հերթով՝ մեկ-մեկ:

Ընտրական հանձնաժողովի կողմից սույն մասի կատարումն ապահովելու անհնարինության դեպքում ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով այն իրականացվում է ոստիկանության օժանդակությամբ:

Երևան քաղաքի թիվ 7/06, 7/16, 7/19, 7/20, 7/22, 7/26, 7/34 տեղամասերում, Իջևան քաղաքի թիվ 41/23 տեղամասում, Գյումրի քաղաքի 34/37 և 35/39 տեղամասերում և Լոռու մարզի 29/21, 30/12 և 30/37 տեղամասերում ընտրողների թիվը մի քանի անգամ գերազանցել է 15 հոգին: Որոշ դեպքերում իրավիճակը կարգավորելու համար հանձնաժողովի նախագահը դիմել է տեղամասի համար պատասխանատու ոստիկանների օգնությանը, իսկ որոշ դեպքերում անգործություն է ցուցաբերել:


Վանաձորի թիվ 30/19 ընտրատեղամասում կազմակերպության դիտորդի ներկա գտնվելու ընթացքում տեղամասում գտնվել են 15-ից ավելի քվեարկողներ: Դիտորդը հանձնաժողովի նախագահին տեղեկացրել է, որ միաժամանակ 15-ից ավել ընտրողների գտնվելը խախտում է համարվում, սակայն նախագահը միջոցներ չի ձեռնարկել ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգը պահպանելու ուղղությամբ:

Երևան քաղաքի թիվ 7/26 տեղամասից ապատեղեկատվություն է տրվել անվտանգության աշխատակիցներին, թե տեղամասում տեղի է ունեցել ծեծկրտուք, սակայն կասկածները հերքվել են և հանձնաժողովի անդամների և դիտորդների կողմից հաստատվել է, որ ոչ մի միջադեպ չի եղել:

Լոռու մարզի Վահագնի գյուղում տեղակայված թիվ 30/18 ընտրատեղամասում գյուղապետը, որը հանդիսացել է ՀՅԴ-ի վստահված անձ, խոչնդոտել է ընտրական գործընթացին: Մասնավորապես, դիտորդի ներկայությամբ վերջինս վիճաբանել է հանձնաժողովի նախագահի, այնուհետև հանձնաժողովի անդամներից մեկի հետ: Միջադեպի վերաբերյալ կազմակերպության դիտորդի միջամտությամբ կազմվել է համապատասխան արձանագրություն:

Վանաձոր քաղաքի 30/24 տեղամասում 11:45-ից մինչև 16:30 անընդհատ կուտակումներ են եղել քվեարկության սենյակում և դրսում, քանի որ հանձնաժողովի անդամները թերացել են իրենց գործում (ընտրողներին ընտրացուցակում մեծ դժվարությամբ են գտել): Դրսում և ներսում սպասող քաղաքացիները դժգոհել են, որ հանձնաժողովը շատ դանդաղ է աշխատում:

3. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը ընտրական օրենքին տիրապետում են




Դիտարկված տեղամասերի տեղամասային հանձնաժողովի նախագահներն ու քարտուղարները հիմնականում տիրապետել են ընտրական օրենսգրքին (78 %): Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը ուղեցույցից պարբերաբար օգտվել են դիտարկված տեղամասերից 11-ում (19 %): Սակայն եղել են նաև տեղամասեր, որտեղ նախագահը կոմպետենտ չի եղել, ինչն ազդել է ընդհանուր գործընթացի, տեղամասի կարգապահության և այլ հարցերի վրա (3 %):

Օրինակ՝ Երևան քաղաքի թիվ 7/22 տեղամասում ցուցակ 1-ում հանձնաժողովի չիմացության


պատճառով քվեարկողները ստորագրել են միայն 1-ին սյունյակում:

4. Խախտումները արձանագրվում են



Դիտարկված տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից խախտումներն արձանագրվել են 24 տեղամասերում (47 %), մասամբ արձանագրվել են 14 տեղամասում (27 %), չեն արձանագրվել 9-ում (18 %): Խախտում չի արձանագրվել դիտարկված տեղամասերից 4-ում (8 %): Դիտորդները նշել են, որ հիմնականում ընտրողական սկզբունքով և նույնիսկ այն տեղամասերում, որտեղ միշտ արձանագրվել են, դա կատարվել է դիտորդների ու վստահված անձանց պնդմամբ:


5. Բողոքներ ընտրատեղամասում՝ քվեարկության հետ կապված գրանցվել են



Ընտրատեղամասերում գրանցվել են բազմաթիվ բողոքներ ընտրական գործընթացի մասնակիցների կողմից, մասնավորապես՝ դիտարկված տեղամասերից 23-ում (51 %) բողոքներ գրանցվել են վստահված անձանց կողմից, որոնք առնչվել են այլ վստահված անձանց կողմից խախտումներին և չարաշահումներին, ինչպես նաև հանձնաժողովի անդամների կողմնակալ վերաբերմունքին: Ընտրողների կողմից հնչեցված բողոքներ գրանցվել են դիտարկված տեղամասերից 14-ում (31 %) և հիմնականում առնչվել են կուտակումներին, քվեարկության գործընթացի դանդաղ ընթացքին և


հանձնաժողովի անարդյունավետ աշխատանքին: Դիտորդների կողմից բողոքներ գրանցվել են դիտարկված տեղամասերից 7-ում (16 %):

6. Վստահված անձի /անձանց նկատմամբ խտրական վերաբերմունք



Դիտարկված տեղամասերից 5-ում (8 %) գրանցվել է խտրական վերաբերմունք վստահված անձանց նկատմամբ: Որոշ դեպքերում խտրական բարյացակամության շնորհիվ տեղամասերում եղել են մինևույն թեկնածուի կամ կուսակցության մեկից ավելի վստահված անձինք, մասնավորապես Վանաձորի թիվ 30/24 տեղամասում ՕԵԿ-ից և ՀՅԴ-ից միաժամանակ եղել են 2 վստահված անձ:

7. Ընտրատեղամասում չլիազորված անձանց ներկա գտնվելը



Դիտարկված տեղամասերից 41-ում (65 %) չլիազորված անձինք չեն եղել, 10 տեղամասում (16 %) եղել են անհայտ անձինք, 11 տեղամասում (11 %)՝ ուստիկանության աշխատակիցներ և 1 տեղամասում՝ ՏԻՍ անդամներ (2 %): Երևան քաղաքի թիվ 7/18 տեղամասում քվեարկության սենյակ, առանց հանձնաժողովի նախագահի կանչելու, պարբերաբար մուտք է գործել տեղամասին կցված ուստիկանը, նաև անհայտ անձինք, որոնք հեռացվել են նախագահի կողմից: Երևան քաղաքի թիվ 7/35 տեղամասում ուստիկանների սենյակը գտնվել է անմիջապես քվեասենյակին կից և ուստիկանները իրենց սենյակից դուրս գալիս անմիջապես հայտնվել են քվեարկության սենյակում, նույն տեղամասում դիտորդներն


արձանագրել են նաև անհայտ անձանց ներկայություն, որոնք միջամտությունից հետո հեռացվել են հանձնաժողովի նախագահի կողմից:

Վանաձոր քաղաքի թիվ 30/31 տեղամասում ՀՀԿ-ից միաժամանակ 2 վստահված անձ են ներկա գտնվել, որոնցից մեկը գրանցված, մյուսը՝ ոչ: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդի միջամտությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը երկրորդ վստահված անձին դուրս է հրավիրել:

Գրանցվել են նաև քվեարկությունից հետո քվեարկողների կողմից քվեասենյակում որոշ ժամանակ մնալու դեպքեր, որոնք շտկվել են դիտորդների միջամտությամբ: Իջևան քաղաքի թիվ 41/28 Ժամը 8:30-ի սահմանում դիտորդը նկատել է, որ ՀՀԿ-ական թեկնածու Հակոբ Հակոբյանի երեք վստահված անձ միաժամանակ գտնվում են տեղամասում: Դիտորդության արդյունքում ՏՀՀ նախագահը նրանցից երկուսին դուրս է հրավիրել: Նրանք վերադարձել են 10 րոպե անց և նորից դուրս հրավիրվել: 30 րոպեից տեղամաս է ներկայացել մի քաղաքացի, որն ունեցել է դիտորդության վկայական, սակայն հավատարմագրված չի եղել որևէ կազմակերպության կողմից: Պարզվել է, որ նրան նույնպես թեկնածու Հակոբ Հակոբյանն է ուղարկել: Քաղաքացին դուրս է հրավիրվել:

Քվեարկության ընթացքում հրապարակայնության վերաբերյալ եղել է մեկ բողոք՝ Լոռու մարզի Լեռնապատ գյուղի թիվ 29/21 տեղամասում լրագրողին չեն թույլատրել գրանցամատյանից քաղվածքներ վերցնել: Ընդհանուր առմամբ դիտարկված տեղամասերում վստահված անձանց, դիտորդների և ՋԼՄ-ների կողմից լուսանկարահանելու և տեսանկարահանելու գործընթացը չի խոչընդոտվել:

8. Ձայների հաշվարկի և ամփոփման նիստ



- ՏՀՀ-ն սկսեց հաշվել ձայներն անմիջապես տեղամասը փակելուց հետո
- ՏՀՀ-ն կարճ ժամանակով ընդմիջեց
- ՏՀՀ-ն ունեցավ երկարատև ընդմիջում


ՀՀ ընտրական օրենսգրքի 71-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Քվեարկության ավարտից հետո՝ մինչև ընտրատեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություն կազմելը, տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը չի կարող ընդհատվել»:

Այնուամենայնիվ դիտարկված տեղամասերից 22-ում (35 %) հանձնաժողովն ընդմիջել է մինչև քվեարկության արդյունքների հաշվարկը, իսկ 6 տեղամասում (9 %) հաշվարկն սկսվել է կարճատև ընդմիջումից հետո: Երևան քաղաքի թիվ 7/11 տեղամասում համամասնական ձայների հաշվարկից հետո է կատարվել ընդմիջում՝ ճաշկերույթ, օգտագործվել է ոգելից խմիչք՝ օղի, գինի, ճաշկերույթը տևել է 40 րոպե, որից հետո շարունակվել է արդեն մեծամասնական ձայների հաշվարկը:

9. Տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքի գնահատականը

Չնայած տեղամասային ընտրական հանձնաժողովների վերաբերյալ բազմաթիվ դիտարկումներին՝ դիտարկված տեղամասերում դիտորդները տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատանքը հիմնականում լավ են գնահատել (միջինը 76 %): Իսկ ընտրական գործընթացի տարբեր փուլերում տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատանքը գնահատվել է հետևյալ կերպ.


9.1. Քվեարկության նախապատրաստման փուլում



- լավ
- շատ լավ
- շատ վատ
- վատ
- միջին


Քվեարկության նախապատրաստման փուլում դիտորդների կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքը «վատ» է գնահատվել Երևանի թիվ 7/02 տեղամասում, որտեղ հանձնաժողովի նախագահը չի տիրապետել իր գործառույթներին, թիվ 7/04, 7/10 տեղամասերում, ինչպես նաև Վանաձոր քաղաքի 29/21 տեղամասում: Տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքը «շատ վատ» է գնահատվել Երևանի թիվ 7/07 և Վանաձորի թիվ 30/19 տեղամասերում:

9,2, Քվեարկության գործընթացի հետ կապված



Քվեարկության գործընթացի հետ կապված տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքը դիտարկված տեղամասերում հիմնականում գնահատվել է լավ: Քվեարկության գործընթացի հետ կապված տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքը շատ վատ է գնահատվել Երևան քաղաքի թիվ 7/07 տեղամասում:

9,3, Քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացում



Քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների աշխատանքը դիտարկված տեղամասերում հիմնականում գնահատվել է լավ (48 %), 8 դեպքում՝ շատ լավ (13 %), 4 դեպքում՝ վատ (6 %), իսկ 3 դեպքում՝ շատ վատ (5 %): Դիտարկված բոլոր տեղամասերում դիտորդները և վստահված անձինք հնարավորություն են ունեցել նկարահանելու քվեարկության ամփոփման ընթացքը, ինչպես նաև ուսումնասիրելու և լուսանկարելու քվեաթերթիկները:

Ընտրատեղամասում արձանագրության միտումնավոր կեղծման դեպքեր չեն արձանագրվել, սակայն հայտնաբերվել են որոշակի անճշտություններ, որոնք թեև էական ազդեցություն չեն ունեցել վերջնական արդյունքների վրա, սակայն կրկին ապացուցում են, որ անհրաժեշտ է բարձրացնել տեղամասային ընտրական հանձնաժողովների մասնագիտական պատրաստվածությունը:

IX. Ընտրական գործընթացի խախտումների վերաբերյալ դիտարկումներ

Ըստ ընտրական օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ կետի՝ «Անձը հաստատող փաստաթուղթ է համարվում անձնագիրը (առանց կենսաչափական տվյալների), նույնականացման քարտը, անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը՝ տրված լիազոր մարմնի կողմից, իսկ զինծառայողների համար՝ զինվորական վկայականը կամ զինվորական գրքույկը, եթե գրանցվում են (քվեարկում են) զինվորական մասի կազմած ընտրողների ցուցակում: Պարտադիր ժամկետային զինծառայողները ծառայությունից օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանակավոր արձակված լինելու դեպքում իրենց մշտական բնակության վայրերում քվեարկում են զինվորական գրքույկներով՝ ներկայացնելով նաև ծառայությունից ժամանակավոր արձակված լինելու մասին փաստաթղթի պատճենը: Ընտրողի անձը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետի ավարտը հիմք չէ նրան քվեարկության չթողնելու համար»:

Առանց անձը հաստատող փաստաթղթի քվեաթերթիկ տալու դեպք արձանագրվել է դիտարկված տեղամասերից երկուսում (3 %):

Երևան քաղաքի թիվ 7/10 տեղամասում վաղ առավոտից նկատվել է, որ ընտրողների մեծամասնության անձնագրերը չափազանց նոր են, թեև տրման ժամկետը ընդհուպ մինչև 1995 թվականն է եղել: Նույն փաստն արձանագրվել է Երևան քաղաքի թիվ 7/09 և Գյումրի քաղաքի թիվ 35/39 տեղամասերում: Ի դեպ Գյումրի քաղաքի թիվ 35/39 տեղամասում փաստն արձանագրել են հանձնաժողովի անդամները:

Գյումրիի թիվ 35/39 տեղամասում ընտրողը ներկայացել է քվեարկելու անձնագրով, որի վավերականության ժամկետը լրացել էր մի քանի տարի առաջ: Թեև անձը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետի ավարտը չի կարող հիմք հանդիսանալ նրան քվեարկության չթողնելու, այնուամենայնիվ հանձնաժողովը տարօրինակ է համարել, թե ինչու քաղաքացին այդքան երկար տարիներ չի նորացրել իր անձնագիրը, կրկնակի ստուգումից հետո պարզվել է, որ քաղաքացու անունը բացակայում է ընտրացուցակներից:

Գյումրի քաղաքի մեկ այլ՝ 33/77 տեղամասում, դիտորդն ականատես է եղել, թե ինչպես է ընտանիքը ներկայացել քվեարկության, սակայն առանց անձնագրին նայելու չի կարողացել հիշել իր հասցեն: Հանձնաժողովի կողմից անձնագիրը ստուգելուց հետո հանձնաժողովը տեղեկացրել է, որ ընտանիքն ապրում է տնակներում և քվեարկության պետք է մասնակցի դիմացի տեղամասում: Ընտանիքն ակնհայտորեն զարմացել է, որ իրենք տնակում են բնակվում:

Քվեարկության ընթացքում, բացի բուն տեղամասերում դիտորդություն իրականացնելուց, ՀՔԱ Վանաձորի գրասենյակի շրջիկ դիտորդներն ուսումնասիրել են նաև մի շարք այլ տեղամասեր:

Քվեարկության ընթացքում իրականացված դիտորդության ընթացքում կատարվել են հետևյալ դիտարկումները:

Կազմակերպության դիտորդների կողմից քարոզչական նյութերի առկայություն և քարոզչություն արձանագրվել է 7 տեղամասում (11 %):


Քվեարկության գաղտնիության սկզբունքը խախտվել է դիտարկված տեղամասերից 22-ում (35 %), իսկ քվեարկության խցիկում քվեաթերթիկը լրացնելու հնարավորություն չունեցող անձանց օգնելու բազմաթիվ դեպքեր են գրանցվել բոլոր տեղամասերում: 4 տեղամասում ինքնուրույն քվեարկելու հնարավորություն չունեցող ընտրողին օգնել է միննույն անձը, իսկ 5 տեղամասում (8 %), օգնության վերաբերյալ տվյալները չեն գրանցվել գրանցամատյանում:

Դիտարկված տեղամասերից 14-ի (23 %) հանձնաժողովի նախագահը 1 ժամյա պարբերականությամբ հաղորդել է քաղաքացիների մասնակցության տվյալները: 4 տեղամասի հանձնաժողովի նախագահները մասնակցության տվյալները հաղորդել են անկանոն կերպով (6 %): 1 տեղամասի հանձնաժողովի նախագահը մասնակցության տվյալները հաղորդել է 4 ժամյա պարբերականությամբ: Դիտարկված տեղամասերից 8-ում (13 %) ընտրողների ուղղորդված հոսք է դիտարկվել:

Դիտարկված տեղամասերից 57-ում (90 %) ձայների հաշվարկն ընթացել է ըստ սահմանված կարգի: Դիտարկված 3 տեղամասում (5 %) տեղամասային ընտրական հանձնաժողովը հաշվարկն իրականացրել է խախտումներով, իսկ 3 այլ տեղամասում փոքր ինչ շեղվել է ընթացակարգից (5 %):

Ընտրական գործընթացի վերաբերյալ դիտարկումներն ավելի մանրամասն ներկայացվում են ստորև.

1. Քվեաթերթիկների և ծրարների տրամադրումը



- SCZ-ն տալիս էր քվեաթերթիկներն ու ծրարներն առանց անձը հաստատող փաստաթղթերի
- SCZ-ն տալիս էր քվեաթերթիկներն ու ծրարներն առանց խախտումների

Առանց անձը հաստատող փաստաթղթի քվեաթերթիկ տալու դեպք արձանագրվել է դիտարկված տեղամասերից երկուսում (3 %): Երևան քաղաքի թիվ 7/07 տեղամասում քաղաքացին քվեարկել է առանց ստորագրելու, ապա ներկայացել կրկին քվեարկելու: Փորձը կանխվել է, սակայն պարզ չէ՝ արդյոք նման դեպքեր կրկնվել են, թե ոչ:

Երևան քաղաքի թիվ 7/09 տեղամասում քաղաքացի Ա. Հարությունյանը հայտնաբերել է, որ իր անվան դիմաց արդեն ստորագրած է՝ տեղեկանքի հիման

վրա, մինչդեռ Ա. Հարությունյանը ներկայացել է իր անձնագրով: Փաստի առնչությամբ արձանագրություն է կազմվել: Իջևան քաղաքի թիվ 41/27 և Երևան քաղաքի թիվ 7/06 տեղամասերում եղել են դեպքեր, երբ քաղաքացիների տվյալները միտումնավոր կամ դիտավորյալ սխալ տողում են լրացվել, երկու տեղամասում էլ քաղաքացիներին թույլատրվել է

քվեարկել իրենց փոխարեն քվեարկած անձի փոխարեն, և կազմվել է արձանագրություն: Նույնատիպ միջադեպ է տեղի ունեցել Երևանի թիվ 7/09 տեղամասում, որտեղ հանձնաժողովի անդամը շփոթել է հոր և որդու անձնագրային տվյալները: ԿԸՀ ներկայացուցիչը, որն այդ պահին ընտրասենյակում է եղել, տեղեկացրել է, որ ջնջում կամ սլաքով ցույց տալու իրավունք չունեն, պետք է կազմել արձանագրություն, որը սակայն չի արվել: 2 քաղաքացին էլ քվեարկել են:


Երևան քաղաքի 7/10 ՏԸՀ-ի անդամ, ԲՀԿ ներկայացուցիչ Ա. Ավետիսյանը, նկատելով, որ անձի անունի դիմաց արդեն կնքված է, փորձել է աննկատ տեղեկացնել այդ մասին ԲՀԿ վստահված անձ Մ. Շահինյանին, սակայն դիտորդները, ներկա գտնվելով, կանխել են կրկնաքվեարկությունը: Երևան քաղաքի թիվ 7/10 տեղամասում հանձնաժողովը պնդել է, որ քվեարկության եկած քաղաքացին արդեն ընտրել է: Ընտրողը պնդել է, որ քվեարկության չի մասնակցել: Կազմակերպության դիտորդը դիմել է հանձնաժողովի նախագահին արձանագրություն կազմելու պահանջով, իսկ նախագահը պատասխանել է, որ ընտրողները քույրեր են եղել և անձնագրերն են շփոթել:

Կրկնաքվեարկության բազմաթիվ այլ ահագանգեր են եղել դիտորդների կողմից, սակայն ցավոք ապացույցներ ձեռք չեն բերվել:

2. Գաղտնի քվեարկություն

Քվեարկության գաղտնիության սկզբունքը խախտվել է դիտարկված տեղամասերից 22-ում (35 %): Մասնավորապես՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի 7/06 ընտրատեղամասում, ըստ դիտորդի՝ պատգամավորության թեկնածու Վարդան Վարդանյանի վստահված անձը՝ Ա. Իսրայելյանը, ուղղորդել է ընտրողներին: Ընտրելուց հետո մարդիկ ընտրելու վերաբերյալ գլխով նշան են տվել վստահված անձին:

Վանաձորի 30/30 տեղամասում դիտորդը հանձնաժողովի նախագահին տեղեկացրել է, որ վստահված անձը շատ մոտ է կանգնած քվեախցիկին: Խնդիրը լուծվել է: Վանաձորի թիվ 30/02 տեղամասում ինչ-որ անձ վիճաբանություն է սկսել թեկնածու Էդմոն Մարուքյանի վստահված



- եղել են քվեախցում մեկից ավելի անձանց գտնվելու դեպքեր
- քվեարկության գաղտնիությունը ապահովված է


անձի հետ, քանի որ վերջինս ասել է, որ չի կարելի մոտենալ քվեախցիկին և տեսնել ընտրողի քվեարկության արդյունքը: Երևան քաղաքի 7/09 տեղամասում ՀԱԿ վստահված անձը, որը կանգնած էր քվեատուփերի մոտ, լուսանկարել է մի կնոջ անձնագրի միջնային մասը: Կինը բողոքել է, բարձրացած աղմուկը հարթվել է ոստիկանի միջամտությամբ: Երևան քաղաքի թիվ 7/09, 7/17, 7/18, 7/20, 7/22, 7/32 և Գյումրիի թիվ 33/77, 34/37, 35/39 տեղամասերում հաճախակի առանց հանձնաժողովի նախագահի իմացության 2 ընտրող են եղել քվեարկության խցիկում՝ օգնության կամ այլ նպատակով:

Երևան քաղաքի թիվ 7/18, 7/01 և Լոռու մարզի թիվ 29/21, 30/02, 30/12, 30/26, 30/37 ընտրատեղամասերում եղել են ցուցադրական բաց քվեարկության դեպքեր:

Լեռնապատ համայնքի թիվ 29/21 տեղամասում ընտրողը ցանկացել է քվեարկությունից հետո լուսանկարել քվեաթերթիկը, սակայն փորձը կանխվել է, իսկ Երևան քաղաքի թիվ 7/27 տեղամասում ընտրողը լուսանկարել է իր քվեաթերթիկը:

Վանաձոր քաղաքի թիվ 30/37 տեղամասի բակում 7-8 քաղաքացի բարձրաձայն հայտարարել են, թե ում են ընտրել (ՀՀԿ, ՀԱԿ):

3. Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողին քվեարկելիս օգնություն ցուցաբերելը



- միննույն անձը քվեարկության խցիկում օգնել է քվեաթերթիկը լրացնել մի քանի անգամ կամ բազմիցս
- քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողին օգնող անձի տվյալները չեն գրառվել ՏՀՀ
- գրանցամատյանում քվեարկության խցիկում օգնել է քվեարկության խցիկում օգնել է քվեաթերթիկը լրացնել այլ անձ, որը ՏՀՀ անդամ և վստահված անձ չէ

Քվեարկության խցիկում քվեաթերթիկը լրացնելու հնարավորություն չունեցող անձանց օգնելու բազմաթիվ դեպքեր են գրանցվել բոլոր տեղամասերում: Դիտարկված տեղամասերից 55-ում օգնություն տրամադրվել է այլ անձի կողմից, որը ՏՀՀ անդամ կամ վստահված անձ չի եղել (87 %): 4 տեղամասում ինքնուրույն քվեարկելու հնարավորություն չունեցող ընտրողին օգնել է միննույն անձը, իսկ 5 տեղամասում (8 %) օգնության վերաբերյալ տվյալները չեն գրանցվել գրանցամատյանում:

Վանաձոր քաղաքի թիվ 30/28 տեղամասում միննույն անձը քվեարկության խցիկում օգնել է 2-3 հոգու, 3-րդ անգամ հանձնաժողովի նախագահը նկատողություն է արել: Միննույն անձի կողմից բազմակի օգնության դեպքեր են գրանցվել նաև Երևանի թիվ 7/19 և 7/34 տեղամասերում:

Երևան քաղաքի 7/06, 7/18, 7/19, Վանաձորի թիվ 30/37 և Իջևանի 41/23 տեղամասերում ոչ բոլոր օգնող քաղաքացիների տվյալներն են գրանցվել գրանցամատյանում: Օրինակ՝ Երևան քաղաքի թիվ 7/06 տեղամասում քաղաքացին օգնել է քվեարկել մի ծեր կնոջ, սակայն առանց անձնագրի է եղել և տվյալները չեն գրանցվել, փաստը չի արձանագրվել նաև դիտորդի զգուշացումից հետո:


Երևան քաղաքի թիվ 7/19 տեղամասում ընտրողին քվեարկելիս օգնություն է ցուցաբերել հանձնաժողովի նախագահը: Նույն տեղամասում ընտրողին օգնություն տրամադրած քաղաքացու տվյալները չեն գրանցվել գրանցամատյանում, նաև եղել է դեպք, երբ ընտրողներից մեկին միաժամանակ օգնել են 3 հոգի և դա չի գրանցվել գրանցամատյանում:

Երևան քաղաքի թիվ 7/20 տեղամասում հանձնաժողովի նախագահը քվեախցիկում մի ծեր կնոջ բացատրել է, թե ինչպես ընտրի: Դիտորդների միջամտությունից հետո նախագահը դուրս է եկել քվեախցիկից: Իջևան քաղաքի թիվ 41/28 տեղամասում ընտրողին օգնել է չգրանցված անձ,

որն ինչպես հետագայում պարզվել է, թեկնածու Վահե Վարդապետյանի վստահված անձն է եղել: Անձը դուրս է հրավիրվել ընտրատեղամասից:

Վանաձոր քաղաքի թիվ 30/37 տեղամասում հանձնաժողովի անդամը մի ծերունու ձեռքից բռնած նշում է կատարել քվեաթերթիկի մեջ:

4. Քարոզարշավ ընտրատեղամասում: Քարոզչական նյութերի առկայություն քվեարկության սենյակում և տեղամասային կենտրոնի մոտակայքում




■ առկա են ■ բացակայում են

ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է թեկնածուների, կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ: Այդ շրջանում քարոզչությունն անվանվում է նախընտրական քարոզչություն:

Քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունն արգելվում է: «ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենքի 401-րդ հոդվածի համաձայն՝ քվեարկության կամ դրան նախորդող օրը քարոզչություն կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով: Կազմակերպության ղիտորդների կողմից քարոզչական նյութեր և քարոզչություն արձանագրվել է 7 տեղամասում (11 %), մասնավորապես՝ Վանաձոր քաղաքի թիվ 29/03, 30/36, 30/33 ընտրատեղամասերի քվեարկության սենյակում փակցված է եղել ՀՀ ցուցակը գլխավորող Սերժ Սարգսյանի նկարը: Իսկ թիվ 30/22 ընտրատեղամասում փակցված է եղել «Առաջ Հայաստան» գրառմամբ բուկլետ: Վանաձոր քաղաքի թիվ 29/03 տեղամասի բակում քվեարկության օրը եղել է Հայաստանի հանրապետական կուսակցության 3 դրոշ: Երևան քաղաքի թիվ 7/22 տեղամասում ընտրողը քվեարկության է եկել 2-3 տարեկան երեխայի հետ, որի ձեռքին եղել է Հայաստանի հանրապետական կուսակցության քարոզչական փուչիկ՝ «Հավատանք, որ փոխենք» գրառումով: Երևան քաղաքի թիվ 7/25 տեղամասում Նիկոլ Փաշինյանի վստահված անձն արձանագրություն է կազմել այն մասին, որ Սամվել Ալեքսանյանի վստահված անձը պարբերաբար դուրս է գալիս ընտրատեղամասից, շփում հաստատում ընտրազանգվածի՝ որոշ բնակիչների հետ: Երևան քաղաքի թիվ 7/11 տեղամասում ՀՀ-ի վստահված անձը ներկայացել է ՀՀ-ի կրծքանշանը պիջակին ամրացրած, դիտորդը դա դիտարկել է որպես քարոզչություն և տեղեկացրել ընտրատեղամասի նախագահին, որը պահանջել է հանել կրծքանշանը: ՀՀ վստահված անձը ենթարկվել է պահանջին:

Իջևան քաղաքի թիվ 41/28 տեղամասում ԲՀ վստահված անձը ընտրողներից մեկի անձնագրում նկատել է ՀՀ-ի տարբերանշանով օրացույց, հանել է այն անձնագրից և ցանկացել է, որ փաստն արձանագրվի որպես քարոզչություն: Քանի որ ներկաների մեծ մասը չի նկատել բացահայտ քարոզի միտում, միջադեպը հարթվել է:

5. Մարդկանց և մեքենաների կուտակումներ տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50մ շառավղով




Դիտարկված տեղամասերից 48-ին հարող տարածքում մարդկանց և մեքենաների կուտակումներ չեն եղել (77 %): 9 տեղամասում առկա կուտակումը վերացվել է ՀՀ ոստիկանության կողմից, իսկ 5 տեղամասում կուտակումները վերացնելու քայլեր չեն ձեռնարկվել: Երևան քաղաքի թիվ 7/25 տեղամասում ՀԱԿ վստահված անձի կողմից արձանագրություն է կազմվել առ այն, որ տեղամասին հարող տարածքում եղել է մեքենա, որով պարբերաբար ընտրողներ են բերվել ընտրատեղամաս, ՀԱԿ-ի վստահված անձը խնդրել է ոստիկանին պարզաբանել իրավիճակը, սակայն մեքենան փախուստի է դիմել:

Վանաձոր քաղաքի թիվ 30/26 տեղամասի հարակից տարածքում մարդկանց կուտակումներ և հերթեր են եղել, սակայն ընտրատեղամաս թողել են միաժամանակ 3-5 հոգի: Նույն տեղամասի հարակից տարածքում նկատվել է նաև մեքենաների կուտակում:

Տարբեր ժամերի դեղին 0528L պետհամարանիշներով գազելը և դեղին 35711 պետհամարանիշով ավտոբուսը Վանաձոր քաղաքի թիվ 30/02 տեղամաս են բերել և ետ տարել ընտրողներին:

Երևան քաղաքի թիվ 7/30 տեղամասի դիտորդը նաև ահազանգել է, որ հարևան՝ 7/29 տեղամասում քառս է տիրում և բազմաթիվ մարդիկ կան:


6. Ընտրողների հոսք նկատվում է



Դիտարկված տեղամասերից 8-ում (13 %) ընտրողների ուղղորդված հոսք է դիտարկվել: Մասնավորապես՝ նկատվել է, որ Երևան քաղաքի թիվ 7/30 տեղամաս մարդիկ մի քանի անգամ ներկայացել են խմբերով և նրանց կազմակերպվածությունը խիստ կասկածելի է թվացել ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդին: Երևան քաղաքի թիվ 7/35 տեղամասում դիտորդները արձանագրել են, որ համատիրության նախագահը քաղաքացիներին

մի քանի անգամ բերել է տեղամաս՝ քվեարկության: Դիտորդների միջամտությամբ անօրինական գործողությունը դադարեցվել է: Ընդհանուր առմամբ, ընտրողների հոսքն ընտրատեղամասեր աննախադեպ բարձր է եղել առավոտյան ժամերին, որոշ տեղերում կուտակումներ գրանցվել են առավոտյան ժամը 8:00-10:00-ի սահմաններում, իրավիճակը հանդարտվել է մինչև կեսօր, որից հետո կուտակումները վերսկսվել են (*տե՛ս հավելված 21, 22*):


7. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ընտրողների թվի մասին հայտնում է



Ըստ ընտրական օրենսգրքի 6-րդ հոդվածի 10-րդ կետի, «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը համապետական ընտրությունների ժամանակ քվեարկության օրը՝ ժամը 9:00-ին, տեղեկություններ է հրապարակում ընտրությունների ընթացքի մասին, իսկ ժամը 12:00-ից սկսած՝ մինչև ժամը 21:00-ն, երեքժամյա պարբերականությամբ՝ ըստ մարզերի (մարզում՝ նաև ըստ մարզկենտրոնների և մարզի՝ 10 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների) և Երևան քաղաքի հրապարակում է տեղեկություններ

մինչև նախորդ ժամը քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի վերաբերյալ»։ Դիտարկված տեղամասերից 14-ի (23 %) հանձնաժողովի նախագահը 1 ժամյա պարբերականությամբ հաղորդել է քաղաքացիների մասնակցության տվյալները։ 4 տեղամասի հանձնաժողովի նախագահ մասնակցության տվյալները հաղորդել է անկանոն կերպով (6 %)։ 1 տեղամասի հանձնաժողովի նախագահ մասնակցության տվյալները հաղորդել է 4 ժամյա պարբերականությամբ։ Դիտարկված տեղամասերից 42-ի հանձնաժողովի նախագահները մասնակցության տվյալները հաղորդել են ըստ սահմանված կարգի՝ երեքժամյա պարբերականությամբ (69 %)։ Այսպիսով մի շարք տեղամասերում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահներն ավելի մեծ հաճախականությամբ են հաղորդել մասնակցության տվյալները և հայտնի չէ, թե ովքեր են շահագրգռված եղել այդ տվյալները ստանալու գործում։ Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ եղել են բացակա քաղաքացիների տվյալները հաղորդելու և քաղաքացիներին «բերման ենթարկելու» և թվաքանակ ապահովելու դեպքեր։ Երևան քաղաքի թիվ 7/35 տեղամասի հանձնաժողովի նախագահը փորձել է ամեն ժամ տեղեկացնել քվեարկության մասնակիցների թվի մասին, սակայն դիտորդների միջամտությամբ գործողությունը դադարեցրել է։

8. Ձայների հաշվարկի համապատասխանությունը օրենքի դրույթներին



Դիտարկված տեղամասերից 57-ում (90 %) ձայների հաշվարկն ընթացել է ըստ սահմանված կարգի։ Դիտարկված 3 տեղամասում (5 %) տեղամասային ընտրական հանձնաժողովը հաշվարկն իրականացրել է խախտումներով, իսկ 3 այլ տեղամասում փոքր ինչ շեղվել է ընթացակարգից (5 %)։ Դիտարկված տեղամասերում ձայների հաշվարկի ժամանակ արձանագրվել են մի շարք արտառոց դեպքեր։ Երևան քաղաքի թիվ 7/19 ընտրատեղամասում մեծամասնական

քվեաթերթիկների հաշվարկի ժամանակ հանձնաժողովի նախագահը քվեաթերթիկները հանել է արկղից և հանձնաժողովի անդամները սկսել են միասին բացել և հաշվել, ընդ որում նախագահը հաշվարկին չի մասնակցել: Երևան քաղաքի թիվ 7/02 տեղամասում քվեարկության արդունքների ամփոփման ժամանակ անվավեր քվեաթերթիկները (օր.՝ երբ քվեաթերթիկում ոչ-ոք նշված չի եղել կամ մեկ ծրարի մեջ տեղադրված է եղել 2 քվեաթերթիկ) հանձնաժողովի նախագահի և մյուս անդամների համաձայնությամբ բաժանվել են թեկնածուների միջև: Անվավեր են ճանաչվել միայն այն քվեաթերթիկները, որոնք լրիվ չնշված են եղել կամ քվեարկած են եղել բոլորին:

Երևան քաղաքի թիվ 7/11 տեղամասում դիտորդն արձանագրել է, որ Ն. Փաշինյանի օգտին քվեարկած քվեաթերթիկի վրա սահմանված նշանից նույնիսկ ոչ էականորեն տարբերվող նշանի առկայության դեպքում քվեաթերթիկը համարվել է անվավեր, մինչդեռ նույնանման դեպքում Ս. Ալեքսանյանի օգտին քվեարկած քվեաթերթիկները միանշանակ համարվել են վավեր: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդն արձանագրել է նման 9 դեպք:

Երևան քաղաքի թիվ 7/26 տեղամասում քվեաթերթիկների հաշվարկի ժամանակ բացահայտվել է, որ թվով 4 համամասնական քվեաթերթիկ բացակայում է:

Բացի այդ, Երևան քաղաքի թիվ 7/16, 7/28, 7/35 և Վանաձոր քաղաքի թիվ 30/24 տեղամասերում հայտնաբերվել են դատարկ ծրարներ: Ընդհանուր առմամբ հայտնաբերված դատարկ ծրարների մեծ թիվը վկայում է, որ ընտրությունների ընթացքում «կարուսելը» լայն կիրառում է ունեցել, այսինքն դատարկ քվեաթերթիկը դուրս է բերվել տեղամասից և ներս է բերվել արդեն քվեարկած՝ այդպիսով հնարավորություն տալով անմիջականորեն վերահսկել անձի քվեարկության արդյունքը:

9. Քվեարկության օրն արձանագրված ընտրակաշառքների դեպքեր

Քվեարկության օրը ահագանգ է ստացվել, որ Վանաձոր քաղաքի թիվ 16-րդ դպրոցում տեղակայված ՀՀԿ նախընտրական շտաբում և Վանաձոր քաղաքի Հերացի 7 շենքի բակում ընտրակաշառք է բաժանվում: Մինչդեռ, ՀՀ քրեական օրենսգրքի 154²-րդ հոդվածով քրեորեն պատժելի է «Թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու պայմանով թեկնածուներից անձամբ կամ միջնորդի միջոցով կաշառք ստանալը», ինչպես նաև, «Ընտրողին թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելուն կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելուն հարկադրելը, որը կատարվել է գույքին վնաս պատճառելու սպառնալիքով, անձամբ կամ միջնորդի միջոցով կաշառք տալով, բռնությամբ կամ բռնություն գործադրելու սպառնալիքով»:

Քաղաքացիները նաև ահագանգել են, որ Վանաձոր քաղաքի թիվ 11 դպրոցում տեղակայված թիվ 30/26 տեղամասում ընտրակաշառք են բաժանում: Նույն տեղամասում դիտորդը մի քանի անգամ ականատես է եղել, թե ինչպես են տարբեր ծերունիներ անձնագրից գումար հանում և դնում գրպանը, իսկ անձնագրից ընկնում է ՀՀԿ-ի նշանով փոքրիկ օրացույց՝ վանդակի մեջ 7 և նշանով: Երբ դիտորդը դրսում մի ծերունու հարցրել է, թե այդ օրացույցները որտեղ են տալիս, ծերունին շատ կոպիտ պատասխանել է. «Քո ինչ գործն ա»: Ի դեպ նույն տեղամասում քվեաթերթիկների հաշվարկի ժամանակ պարզվել է, որ որոշ ընտրողներ նշանը դրել են ոչ թե համապատասխան վանդակում, այլ 7 թվի վրա, ինչպես եղել

Է օրացույցում: Այդ թերթիկները ճանաչվել են անվավեր:

2012 թ. մայիսի 6-ին՝ Գյումրի քաղաքի թիվ 35/39 տեղամաս է այցելել մի ծեր կին և մոտենալով «Անկախության Մերունդ» ՀԿ-ն ներկայացնող դիտորդին (որը տվյալ դպրոցի ուսուցիչ էր և ըստ որոշ կցկտուր շշուկների, ի սկզբանե պետք է հանդես գար որպես հանձնաժողովի անդամ կամ ինչ-որ կուսակցության վստահված անձ)՝ հարցրել է, թե արդյոք ոմն Անահիտ գտնվում է այդ տեղամասում: Դիտորդը և հանձնաժողովի անդամները տեղեկացրել են, որ նման անձ հանձնաժողովում չկա, որից հետո կինը բորբոքված հայտարարել է՝ «Հա, իհարկե չի լինի, խաբեբայի մեկն ա, սաղ թաղին խաբեց փողերը չտվեց: Հինգ հազար դրամ էր, դեղ էի առնելու, ինչի՞ խաբեց, չտվեց»: Միջադեպի ընթացքում հանձնաժողովի անդամները հորդորել են կնոջը չաղմկել և դուրս գալ՝ այդ հարցերը դրսում պարզելու:

Արձանագրված բազմաթիվ ահազանգերն ապացուցում են, որ 2012 թ. մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ ընտրակաշառքը համատարած բնույթ է կրել, մինչդեռ ընտրակաշառքի վերաբերյալ հարուցված քրեական գործերը սակավաթիվ են և ամենևին չեն արտացոլում իրականությունը:

X. Քվեարկության օրը հայտնաբերված խախտումների

վերաբերյալ կազմակերպության կողմից իրականացված

գործողություններ

Երևան քաղաքի թիվ 7/02 տեղամասում դիտորդին հանձնաժողովի նիստին մասնակցել չթույլատրելու վերաբերյալ կազմակերպության կողմից անմիջապես գրություն է ուղարկվել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին, որից հետո դիտորդին թույլատրվել է ներկա գտնվել քվեարկության սենյակում և մասնակցել նիստին (*տե՛ս հավելված 23*):

Քվեարկության օրը ստացվել են բազմաթիվ ահազանգեր, որ մի շարք տեղամասերում անձը հաստատող փաստաթղթում դրված կնիքը մոտ 15 րոպե հետո ցնդում է: Կազմակերպության կողմից դիմում է ուղարկվել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, որից հետո ԿԸՀ նախագահի հրամանով ցնդող թանաքը փոդարհվել է այլ թանաքով: Կազմակերպության դիտորդներին հրահանգվել է խնդրի մասին անմիջապես տեղեկացնել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահներին և հորդորել հրատապ միջոցներ ձեռնարկել: Չնայած խնդրի հրատապությանը որոշ տեղամասերում տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից շարունակել է օգտագործվել ցնդող թանաքը, որի մասին կազմակերպությունը կրկին ահազանգել է: Երևան քաղաքի թիվ 7/02 ընտրատեղամասում արձանագրվել է, որ ժամը 15:00-ի սահմաններում ընտրողի անձը հաստատող փաստաթղթի մեջ դրվող դրոշմակնիքի թանաքը փոխված չի եղել: Կազմակերպության կողմից գրություն է ուղարկվել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով խախտումը վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու (*տե՛ս հավելված 24*): Որոշ ժամանակ անց կազմակերպության դիտորդը հայտնել է, որ կնիքի թանաքը փոխվել է: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարզաբանում է տարածել, որ խնդիրը թանաքի օգտագործման կանոնների խախտումն էր՝ անհրաժեշտ էր այն թափահարել մինչև օգտագործելը:

Կազմակերպության դիտորդների կողմից արձանագրվել է, որ Վանաձոր քաղաքի թիվ 29/03, 30/36, 30/33 ընտրատեղամասերի քվեարկության սենյակում փակցված է եղել ՀՀԿ ցուցակը գլխավորող Սերժ Սարգսյանի նկարը: Իսկ թիվ 30/22 ընտրատեղամասում փակցված է եղել «Առաջ Հայաստան» գրառմամբ բուկլետ: Խախտումը վերացնելու նպատակով գրություն է հղվել թիվ 29 և 30 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին: Թիվ 30 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից կազմակերպության գրությանն ի պատասխան տեղեկացվել է, որ մինչև գրության ստացումը՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի ցուցումով խախտումը վերացվել է (*տե՛ս հավելված 25*): Իսկ 2012 թ. մայիսի 11-ին ստացվել է որոշում, համաձայն որի՝ կազմակերպության բողոքի հիման վրա վարչական վարույթի հարուցումը մերժվել է պատճառաբանությամբ, որ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի համաձայն՝ խախտման վերաբերյալ բողոք կարող է ներկայացնել յուրաքանչյուր ոք, եթե գտնում է, որ խախտվել է իր սուբյեկտիվ ընտրական իրավունքը: Հանձնաժողովը գտել է, որ կազմակերպությունը չի հանդիսանում նշված հարցով ընտրական հանձնաժողովին դիմումներ ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդն արձանագրել է, որ Վանաձոր քաղաքի թիվ 8 դպրոցում տեղակայված թիվ 30/19 ընտրատեղամասում կուտակումներ են եղել. քվեարկության սենյակում միաժամանակ գտնվել է 15-ից ավելի ընտրող, որի մասին հանձնաժողովի նախագահին դիտորդը գգուշացրել է, սակայն նախագահի կողմից միջոցներ չեն ձեռնարկվել խախտումը վերացնելու ուղղությամբ: Փաստի վերաբերյալ գրություն է ուղարկվել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, սակայն պատասխան չի ստացվել (*տե՛ս հավելված 26*):

Երևան քաղաքի թիվ 7/08 տեղամասում համամասնական ընտրակարգի քվեաթերթիկների մեկ փաթեթ կնիքված չի եղել հանձնաժողովի երեք անդամների կողմից: Խախտումը վերացնելու վերաբերյալ գրություն է ուղարկվել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ խախտումը վերացնելու ուղղությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու պահանջով (*տե՛ս հավելված 27*): Գրության վերաբերյալ ՀՀ ԿԸՀ-ից պատասխան չի ստացվել:

2012 թ. մայիսի 6-ին անհայտ քաղաքացուց ստացվել է ահազանգ, որ Վանաձոր քաղաքի թիվ 30/32 ընտրատեղամասի մոտակայքում՝ ՀՀԿ-ի շտաբում, ընտրակաշառք է բաժանվում: Կազմակերպության դիտորդները ժամը 19:30-ի սահմաններում մեկնել են նշված վայր: Շտաբի դռները փակ են եղել, սակայն բակում սպասող մի կին և տղամարդ նշել են, որ շտաբի աշխատակիցները գնացել են գումար բերելու, և իրենք էլ դրան են սպասում: Դիտորդներին նույնպես հորդորել են սպասել: Շտաբի մոտ սպասող տղամարդը նշել է, որ դիտորդները կարող են գնալ թիվ 30/32 տեղամաս և հնարավոր է, որ տեղամասում գտնվող ոմն Վազգեն գումարն այնտեղ վճարի:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ահազանգ է ստացել այն մասին, որ Վանաձոր քաղաքի Հերացի 7 շենքի բակում գտնվող հանգստի տաղավարում 2 կին ընտրակաշառք են բաժանում: Կազմակերպության ներկայացուցիչները մեկնել են դեպքի վայր և տեսել, որ հանգստի տաղավարում տեղադրված սեղանի մոտ նստած են 2 հոգի, իսկ սեղանին դրված են դրամապանակ և ցուցակներ: Մոտակայքում հավաքված են եղել անձնագրերով քաղաքացիներ, որոնք մոտեցել են սեղանի մոտ նստած կանանց ու ինչ-որ բան շնջացել: Կազմակերպության ներկայացուցիչները տեսել են, թե ինչպես հավաքվածներից մեկը մոտեցել է կանանցից մեկին և հարցրել ինչ որ բան, որին ի պատասխան սեղանի մոտ նստած կանանցից մեկը պատասխանել է՝ ոչ, քաղաքացին էլ ի պատասխան ասել է. «Եթե ոչ, ուրեմն ոչ մեկին էլ չեմ ընտրի» ու հեռացել: Փաստի առթիվ կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել:

2012 թվականի մայիսի 7-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունը ներկայացված հանցագործության մասին հաղորդումն ուղարկել է ՀՀ ԱԺ 2012 թ. մայիսի 6-ին կայանալիք ընտրությունների ընթացքում ընտրության իրավունքի հնարավոր իրավախախտումների վերաբերյալ հաղորդումների քննարկման նկատմամբ դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու, համապատասխան դատախազների գործողությունը համակարգելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի ղեկավարին:

2012 թվականի մայիսի 11-ին ՀՀ գլխավոր դատախազության կողմից ստացվել է գրություն այն մասին, որ կազմակերպության կողմից ներկայացված հաղորդումը ուղարկվել է Լոռու մարզի դատախազ Կ. Շահբազյանին: 2012 թվականի մայիսի 15-ին Լոռու մարզի դատախազությունից ստացվել է գրություն այն մասին, որ կազմակերպության կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդումը ուղարկվել է ՀՀ ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժնի պետ Թ. Շուշանյանին և ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ Ա. Համբարյանին:

2012 թվականի հունիսի 1-ին ստացվել է Լոռու մարզի քննչական բաժնի քննիչ Ն. Օսյանի 2012 թ. մայիսի 25-ին կայացված քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը՝ հանցադեպի բացակայության հիմքով: Վարույթն իրականացնող մարմնի կողմից նյութերի նախապատրաստման ընթացքում հարցաքննվել են Վանաձոր քաղաքի Հերացու 7 շենքի 3 բնակիչներ, որոնք հայտնել են, որ շենքի բակում գտնվող տաղավարից ոչ ոք ընտրակաշառք չի բաժանել (*տե՛ս հավելված 28*):

2012 թ. հունիսի 6-ին կազմակերպության կողմից բողոքարկվել է վերը նշված որոշումը ՀՀ գլխավոր և Լոռու մարզի դատախազություններ, հիմքում ընդունելով այն հանգամանքը, որ նախաքննության մարմնի կողմից նյութերի նախապատրաստման ընթացքում թույլ են տրվել քրեադատավարական նորմերի խախտումներ:

Ահազանգ է ստացվել նաև, որ Վանաձոր քաղաքի թիվ 16 միջնակարգ դպրոցում տեղակայված Հանրապետական կուսակցության շտաբում ընտրակաշառքներ են բաժանվում, որի կապակցությամբ կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն: 2012 թվականի մայիսի 7-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունը ներկայացված հանցագործության մասին հաղորդումը ուղարկել է ՀՀ ԱԺ 2012 թ. մայիսի 6-ին կայանալիք ընտրությունների ընթացքում ընտրության իրավունքի հնարավոր իրավախախտումների վերաբերյալ հաղորդումների քննարկման նկատմամբ դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու, համապատասխան դատախազների գործողությունը համակարգելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի ղեկավարին: 2012 թվականի մայիսի 11-ին ՀՀ գլխավոր դատախազության կողմից ստացվել է գրություն այն մասին, որ կազմակերպության կողմից ներկայացված հաղորդումը ուղարկվել է Լոռու մարզի դատախազ Կ. Շահբազյանին: 2012 թվականի մայիսի 15-ին Լոռու մարզի դատախազությունից ստացվել է գրություն առ այն, որ կազմակերպության կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդումը ուղարկվել է ՀՀ ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժնի պետ Թ. Շուշանյանին և ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ Ա. Համբարյանին:

2012 թվականի հունիսի 1-ին ստացվել է Լոռու մարզի քննչական բաժնի քննիչ Ն. Օսյանի կողմից 2012 թ. մայիսի 25-ին կայացված քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում՝ հանցադեպի բացակայության հիմքով: Վարույթն իրականացնող մարմնի կողմից հարցաքննվել է Վանաձոր քաղաքի թիվ 16-րդ դպրոցում տեղակայված նախընտրական շտաբի ղեկավարը և 3 աշխատակից, որոնք բնականաբար հերքել են շտաբում ընտրակաշառք բաժանելու հանգամանքը:



2012 թ. հունիսի 6-ին կազմակերպության կողմից վերը նշված որոշման դեմ դիմում-բողոք է ներկայացվել ՀՀ գլխավոր և Լոռու մարզի դատախազություններ: Բողոքարկման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ նախաքննության մարմնի կողմից նյութերի նախապատրաստման ընթացքում թույլ են տրվել քրեադատավարական նորմերի խախտումներ: 2012 թ. հունիսի 11-ին ստացվել է դատախազի որոշումն առ այն, որ քննիչի որոշումը հիմնավորված է և օրինական, այն վերացնելու հիմքեր չկան (*տե՛ս հավելված 29*):

XI. Հավելվածներ



Հավելված 1: Մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորներ

Ընտրատարածք	Ազգանուն, Անուն, Հայրանուն	Կուսակցական պատկանելությունը	Առաջադրումը
Թիվ 1	Հայրապետյան Ռուբեն Ռաֆիկի	ՀՀԿ	ՀՀԿ
Թիվ 2	Ֆարմանյան Սամվել Ժոռայի	ՀՀԿ	ՀՀԿ
Թիվ 3	Ստեփանյան Արթուր Արսենի	ՀՀԿ	ՀՀԿ
Թիվ 4	Մարգարյան Արտակ Սամվելի	ՀՀԿ	ՀՀԿ
Թիվ 5	Գևորգյան Արթուր Սամվելի	ՀՀԿ	ՀՀԿ
Թիվ 6	Հովսեփյան Ռուբեն Գառնիկի	ՀՀԿ	ՀՀԿ
Թիվ 7	Ալեքսանյան Սամվել Լիմինդրի	Անկ.	ՀՀԿ
Թիվ 8	Նահապետյան Կորյուն Գառնիկի	ՀՀԿ	ՀՀԿ
Թիվ 9	Սադոյան Ռուբեն Ալֆրեդի	ՀՀԿ	ՀՀԿ
Թիվ 10	Նուշիկյան Գարեգին Գագիկի	Անկ.	ՀՀԿ
Թիվ 11	Մարգարյան Գրիգորի	Անկ.	ԲՀԿ
Թիվ 12	Խաչատրյան Լյովա Յուզիկի	ԲՀԿ	ԲՀԿ
Թիվ 13	Սեդրակյան Մինե Դավթի	ՀՀԿ	ՀՀԿ
Թիվ 14	Մարկոսյան Վրեժ Վարանցովի	ՀՀԿ	ՀՀԿ
